

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Խօսքէն Գործի Անցնելու Ժամանակը

Հայաստանի Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը (ԿԸՅ) արտակարգ նիստի ընթացքին պաշտօնապէս յայտարարուեցաւ, որ իշխանութեան, ընդդիմութեան եւ քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչներուն մասնակցութեամբ պայմանական ձեւով տեղի ունեցած բանակցութիւններուն որպէս արդիւնք Ընտրական Օրէնսգիրքին մէջ կատարուած փոփոխութիւնները յառաջիկայ համապետական ընտրութիւններուն պիտի չիրագործուին:

ԿԸՅ նախագահ Տիգրան Մուկուչեան նշեց, որ երբ օր առաջ կառավարութեանն տեղեկացած են, որ տեխնիկական ապահովումը իրականացնող լեհական ընկերութիւնը գործընթացը չի կրնար սկսիլ մինչեւ Սեպտեմբեր 1-ը, ինչ որ օրէնքով կը պահանջուէր:

Ամիսներ տեւած քննարկումներու արդիւնքով, այս տարուան Յունիս 30-ին ընդունուած Ընտրական Օրէնսգիրքը կրկին փոփոխութեան ենթարկուեցաւ: Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը պարտաւորուեցաւ միջազգային նուիրատու կազմակերպութիւններու ֆինանսաւորմամբ մինչեւ Սեպտեմբեր 1-ը սկսիլ փոփոխութիւններու գործընթացը, որուն համաձայն ընտրողներուն պէտք է անվճար տրամադրուէին նոյնականացման քարտեր, ձեռք բերուէին տա-

ԿԸՅ Չեղեալ Համարեց Ընտրական Օրէնսգիրքի Փոփոխութիւնները

սը մատնահետքերը ստուգող սարքաւորումներ եւ ստեղծուէր այդ մատնահետքերու տուեալներուն միասնական պահանջ:

Թէեւ բանակցութիւններուն մասնակցած Հայ Ազգային Գոնիւրէսն ու «Բարգաւաճ Հայաստան»-ը հաստատեցին, որ գործընթացը տապալուած է, սակայն, անոնք կը նշեն, որ Հանրապետական կուսակցութեան հետ այժմ կը քննարկեն քուէարկած անձերու ցուցակները հրապարակելու հարցը:

Այս գործառույթը պէտք է իրականացնէ Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը: Սակայն, Տիգրան Մուկուչեան «Ազատութեան» հետ ունեցած զրոյցի ընթացքին յայտնած է որ, բանակցութիւններէն տեղեկ չէ, սակայն, եթէ նման որոշում կայանայ, Յանձնաժողովը պարտաւոր կ'ըլլայ կեանքի կոչել գայն:

Ընտրական օրէնսգիրքի բանակցուած փոփոխութիւններուն համար կը պահանջուէր 16 միլիոն եւրօ եւ հակառակ ընդդիմադիրներուն պնդման, թէ անհրաժեշտ գումարը դեռ նախորդ ամսուրէն առկայ է, Հայաստանի կառավարութեան աշխատակազմի ղեկավար-նախարար Դաւիթ Յարութիւնեանը ԿԸՅ նախագահին ուղարկած նամակին մէջ նշած է, թէ «այդ հանգամանքը հաստատող փաստաթուղթ գոյութիւն չունի»:

Գերմանիա Մերժեց Թուրքիոյ Պահանջը



Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Ֆրանք Շթայնմայրը

Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Ֆրանք Վայթըր Շթայնմայրը պատասխանելով իր թուրք պաշտօնակից Մաւրութ Չաոււ շողլիի պահանջին յայտարարեց, որ Պոլսու պանութիւնը կողմէ Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող բանաձեւը ոչ մէկ կապ ունի գերմանացի պատգամաւորներու թրքական ինձիւրիքի ռազմական այցելելու խնդրին հետ:

Ինչպէս ծանօթ է, Անգարան վրդոված Գերմանիոյ խորհրդարանին կողմէ Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող բանաձեւի ընդունումէն, արգիլած էր գերմանացի խորհրդարանականներու մուտքը ռազմական, ուր կը գտնուին Գերմանացի բանակայիններ, օժանդակելու համար Սուրիոյ մէջ «Իսլամական պետու-

Լուս Անձելոսի Իրանահայ Միութիւնը Արժանաւորապէս Նշեց իր Հիմնադրութեան 60 ամեակը



Տեսարան մը Իրանահայ Միութեան 60-ամեակի հանդիսութենէն

Տ. Ա. ՎԱՆԱՏՈՒՐ

Շաբաթ 27 Օգոստոս 2016 ին, Իրանահայ Միութեան հոգաբարձութեան նախաձեռնութեամբ, տեղի ունեցաւ միութեան հիմնադրութեան 60-ամեակի եւ Լուս Անձելոսի եւ Տօքթ. Յակոբ Այնթապեանի ամուսնութեան 50-րդ տարեդարձի տպարորիչ նշումը, համանուն միութեան կեդրոնի շքեղ հանդիսատեսին ներս, Կլէնտէյլ:

Լուս Անձելոսի Իրանահայ Միութեան գաղութէններու ծառայած Շարք Է 5

Շարք է 4

Նորագիրներու Մուտքը Հնչակեան Շարքերէն Ներս

ՄԳ-ՀԿ Փաստօրէնայի կեդրոնէն ներս տեղի ունեցած յատուկ արարողութեան մը ընթացքին, խումբ մը համալսարանական երիտասարդ-երիտասարդուհիներ եկան միանալու Հնչակեան Կուսակցութեան շարքերը:

ՄԳ-ՀԿ Կեդրոնական վարչութեան եւ Արևմտեան Ամերիկայի վարիչ Մարմինի անդամներու ներկայութեան, նորագիրները Հնչակեան դրօշին վրայ երդում տուին հաւատարիմ մնալու Կուսակցութեան գաղափարախօսութեան եւ սկզբունքներուն ու անոր միջոցաւ ծառայելու ազգին ու հայրենիքին:

Նորագիրները որպէս իրենց խմբակի անուն ընտրեցին՝ Ժիրայր-Մուրատ յեղափոխական անունը:

Երդման արարողութեան յաջորդեց ընդունելութիւն, որուն ներկայ եղան մեծ թիւով ընկեր-ընկերուհիներ:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Սերժ Սարգսեանը Զրաժարուել է Յովիկ Արրահամեանից

ՅԱԿՈՒ ԲԱՂԱԼԵԱՆ

Հայկական ժամանակը գրում է, որ հրապարակելով Հայաստանի տնտեսութեան ակտիւութեան անկման ցուցանիշը, այն էլ տնտեսական աճի մասին, Յովիկ Աբրահամեանի յայտարարութիւնների ֆոնին, նրան հասկացնում են, որ չպէտք է ունենայ յետագայ քաղաքական կարիերայի մեծ յաւակնութիւն:

Մեծ յաւակնութիւնը ենթադրում է թերեւս վարչապետի պաշտօնի պահպանում, քանի որ առաջին դէմքն այլեւս լինելու է վարչապետը՝ պատերազմի ընթացքում նաեւ Գերագոյն գլխաւոր հրամանատարը: Յովիկ Աբրահամեանը յայտնել է վարչապետ մնալու ցանկութիւն, հրապարակով՝ հեռուստաներում:

Իսկ ո՞վ է նրան հասկացնում, որ չպէտք է ունենայ մեծ յաւակնութիւն: Հազիւ թէ ազգային վիճակագրական ծառայութեան պետ Ստեփան Մնացականեանը: Ենթադրում է, որ հասկացնողը Սերժ Սարգսեանն է, պարզապէս ԱՎԾ միջոցով:

Միեւնոյն ժամանակ, հետաքրքիր է, որ Սերժ Սարգսեանն այդ ակնարկները չի անում այնպէս, ինչպէս օրինակ նախորդ կառա-

վարութեան ժամանակ: Նախորդի պարագայում Սարգսեանը բացառապէս ասում էր, որ եթէ կառավարութիւնը չի ապահովում առնուազն 7 տոկոս աճ, ապա պէտք է հեռանայ: Իհարկէ, կառավարութիւնը հեռացուեց փոքր ինչ աւելի ուշ, եւ բոլորովին այլ իրավիճակում՝ ոչ իշխանական բեւեռի հետ դիմակայութեան գործընթացում, բայց այդուհանդերձ Սարգսեանը նախորդ կառավարութեան հանդէպ հանդէս էր գալիս ընդգծուած պահանջներով:

Յիշարժան է օրինակ ատկատներ թեմայով յայտնի խորհրդակցութիւնը եւ «լաւ չէք աշխատում» դիտողութիւնը:

Մինչդեռ, ներկայիս կառավարութեան առաջ Սերժ Սարգսեանը չի դրել որեւէ այդպիսի նշանոց, չի ներկայացրել պահանջ, դիտողութիւն: Աւելին, 2014 թուականի Ապրիլին Սերժ Սարգսեանը Յովիկ Աբրահամեանի վարչապետական թեկնածութիւնը ներկայացնելով ՀՀ գործկոմին, ասում էր, թէ նրան տուել է կառավարութիւն ձեւաւորելու ազատութիւն: Աւելի ուշ, 2015 թուականի Դեկտեմբերին Սահմանադրութեան փոփոխութեան հանրաքուէից առաջ, մի խումբ հեռուստաընկերութիւնների տուած հարցազրոյցում Սերժ

Սարգսեանը հրաժարուեց տնտեսութեան համար պատասխանատուութիւնից եւ մեղադրեց ինչ որ մէկին, որ տնտեսական խնդիրների բողոքները կառավարութիւն ուղղուելու փոխարէն ուղղուում են նախագահի նստավայր՝ որտեղ չկայ դրանք լուծելու դէ յիւրէ իրաւասութիւն:

Ինչո՞ւ էր Սերժ Սարգսեանն աւելի խստապահանջ Տիգրան Սարգսեանի կառավարութեան հանդէպ, ու ինչո՞ւ հենց սկզբից հրաժարուեց Յովիկ Աբրահամեանի կառավարութեան համար պատասխանատուութիւնից եւ նրան չներկայացրեց որեւէ պահանջ:

Սերժ Սարգսեանը Տիգրան Սարգսեանի հանդէպ իրեն ուժեղ էր համարում, իսկ Յովիկ Աբրահամեանի հանդէպ՝ ո՞չ: Թէ՞ Սարգսեանի կառավարութիւնը համարում էր իրեն, իր ձեւաւորածը, ըստ այդմ պատասխանատու դրա համար, իսկ Յովիկ Աբրահամեանի վարչապետութեան «հեղինակ» համարում է ոչ թէ իրեն, այլ ոչ իշխանական բեւեռին, որի ազդեցութեան ներքոյ Աբրահամեանը նշանակուեց վարչապետ:

Հետեւաբար, Տիգրան Սարգսեանի կառավարութեան տապալումով Սերժ Սարգսեանը շահագրգռուած չէր, իսկ ահա Յովիկ Աբրահ-

համեանի տապալումով շահագրգռուած է: Ըստ այդմ, Սարգսեանը Աբրահամեանին տուեց ազատ եւ անկաշկանդ տապալուելու հնարաւորութիւն, տուեց ազատութիւն, չխանգարելով տապալուել՝ ապահովագրելով ինքզինքը այդ տապալումների համար պատասխանատուութիւնից: Սարգսեանը 2014 թուականի Ապրիլից մինչ այժմ գործնականում ցուցաբերել է մէկ վերաբերմունք՝ նա պարբերաբար հրաժարուել է Յովիկ Աբրահամեանի կառավարութիւնից:

Բայց խնդիրը միայն Յովիկ Աբրահամեանը չէ: Նրա գործունէութեան համար պատասխանատուութիւնից Սարգսեանը հրաժարուել է հրապարակաւ, սակայն հարց է առաջանում, թէ ինչ է լինելու Աբրահամեանից յետոյ: Այստեղ էական է, թէ երբ է լինելու այդ յետոյ: Յովիկ Աբրահամեանը պաշտօնական կ'արուի՞ մինչեւ խորհրդարանի ընտրութիւն, օրինակ աշնանը, թէ՞ կը պաշտօնավարի մինչեւ խորհրդարանի ընտրութեան արդիւնք, որից յետոյ կը լինի այլ վարչապետ ու կառավարութիւն՝ ազգային համաձայնութեան, ինչպէս ակնարկել էր Սերժ Սարգսեանը:

Աբրահամեանն իհարկէ չի յանձնուի, պարզապէս խնդիրն այն է, որ ներքին ու արտաքին քաղաքական իրողութիւնները այդ դէպքում կը պահանջեն բացառապէս դիմադրութիւն Սերժ Սարգսեանին: Սեփական յաւակնութիւնը պաշտպանելու այլ տարբերակ Յովիկ Աբրահամեանը չունի, առաւել էւս այն պարագայում, երբ յուլիսեան իրադարձութիւններից յետոյ Սերժ Սարգսեանը իրաւապահ ամբողջ համակարգը գործնականում վերցրեց վերահսկողութեան ներքոյ, էպպէս սահմանափակելով իշխանութեան ներսում ստուերային գործողութիւնների հնարաւորութիւնը:

«ԼՐԱԳԻՐ»

Գիւմրին եւ Վանաձորն Ընդդիմութեան Վերջին Շանսն Են

ԱՆԻ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Շուտով մեկնարկելու են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրութիւնները, որտեղ կարեւորը, սակայն, Գիւմրու ու Վանաձորի աւագանու ընտրութիւններն են: Այս երկու քաղաքները Հայաստանի ամենամեծ քաղաքներն են Երեւանից յետոյ, բացի այդ էլ՝ հենց դրանք են հիմնականում աչքի ընկնում հակաիշխանական տրամադրութիւններով, եւ ընտրութիւնների ժամանակ իշխանութիւնը հենց այս երկու քաղաքում է պարտութիւն կրում: Յիշենք թէկուզ վերջինը՝ սահմանադրական հանրաքուէն, որտեղ «այո»-ն պարտութիւն կրեց՝ չնայած, որ ներդրուեցին բոլոր ուսուցիչներն ու ջանքերը:

Ինչեւէ, Գիւմրին ու Վանաձորը, որոնք, ինչպէս նշեցինք, բաւական խոշոր համայնքներ են, լաւ հնարաւորութիւն են ընդդիմութեան համար քաղաքական իշխանութեան նուաճման կամ բաշխման (ըստ ճաշակի) տեսանկիւնից եւ կարող են բաւական լուրջ հակազդեցութիւն ստեղծել կեդրոնական իշխանութեանը: Այստեղ ընդդիմութեան յաղթանակը կը նշանակի, այսպէս կոչուած, «համակարգի ծայրամասային բեւեռ», որն ինքնըստինքեան կարող է ազդեցութիւն ունենալ ներքաղաքական գործընթացների վրայ: Հաւանաբար այս հանգամանքն էլ հաշուի առնելով՝ իշխող ՀՀԿ-ն գնաց ընտրական օրէնսգրքի այնպիսի փոփոխութեան, որով Գիւմրու եւ Վանաձորի քաղաքապետի ուղղակի ընտրութեան ինստիտուտը փոխարինուեց համամասնական ընտրական համակարգով, ըստ որի՝ նախ պէտք է ընտրուեն աւագանու անդամներ, ովքեր էլ իրենց միջոց ընտրելու են քաղաքապետ: Թէեւ կառուցուած քայլն այս փոփոխութիւնը հանրապետականների հա-

մար կարող է ինչ-որ գործիք հանդիսանալ մրցակցութիւնն իրենց օգտին ուղղորդելու առումով, սակայն սա այն հիմնական գործօնը չէ, որն ունակ է երաշխաւորելու վերջնական յաղթանակ: Ամենախեղճն այն է, որ ընդդիմութիւնն այստեղ չմիաւորուի, ինչն էլ հնարաւորութիւն կը տայ աւելի մեծացնելու իշխանութեան յաղթանակի շանսերը: Ու թէեւ ընտրութիւններին դեռ մի փոքր ժամանակ կայ, սակայն այս պահի դրութեամբ, ընդդիմութիւնը դեռեւս չի միաւորուում, եւ հնարաւոր է՝ այդ դաշտի սուբիեկտները հանդէս գան առանձին-առանձին: Օրինակ՝ Գիւմրիում մասնակցելու են ընդդիմադիր «Քաղաքացիական պայմանագիր», «Լուսաւոր Հայաստան» ՀԱԿ, «Համախմբում», «Բարգաւաճ Հայաստան» եւ նորաստեղծ ԳԱԼԱ կուսակցութիւնները: Չնայած ԳԱԼԱ-ն դեռեւս քննարկումներ է անցկացնում «Լուսաւոր Հայաստանի» ու էլի մի քանի ուժերի հետ, սակայն արդէն պարզ է, որ մէկ միասնական ճակատ չի ձեւաւորուելու: Եթէ նոյնիսկ ինչ-որ դաշինքներ էլ լինեն, միեւնոյն է, ընդդիմութեան երկփեղկումն արդէն իսկ նշանակում է ընդդիմադիր էլեկտորատի մասնատում եւ ձայների փոշիացում: Այս պայմաններում ուժեղ վարչական, ֆինանսական ուսուցիչների տիրապետող ՀՀԿ-ի հետ մրցակցութիւնը դժուարանալու է, եւ նա կարող է հեշտութեամբ պարտութեան մատնել ընդդիմութեանը եւ գալիք խորհրդարանական ընտ-

րութիւններից առաջ ունենալ դիրքաւորման գերագանց հնարաւորութիւն: Փաստօրէն, ընդդիմութիւնն իր ամբիցիոզ կեցողածքով ու ոչ ստրատեգիական մօտեցմամբ կարող է տանուլ տալ այս պայքարը եւ խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ չկարողանալ ուսուցիչներով իրեն մեծապէս գերազանցող իշխանութեանը ուժեղ մրցակցութիւն հակադրել: Բացի այդ՝ եթէ ընդդիմութիւնը վերջնականապէս չհամախմբուի այստեղ, ապա տեղի կ'ունենայ ընդդիմադիր դաշտի ատոմիզացիա՝ փոշիացում, ընդ որում՝ չիշեալ դաշտի նկատմամբ հանրութեան վստահութեան փոշիացման գուցորդամբ: Կրկին քաղաքական այդ ուժերը կը կանգնեն մարզինալցման վտանգի տակ եւ չեն կարողանայ արդիւնաւէտ պայքար մղել իշխանութեան դէմ: Առանց այն էլ իշխանութիւնն ամէն ինչ անում է՝ ընդդիմութեան սուբիեկտներին բաժանելու, միմեանց հակադրելու եւ դէպի մարզինալ դաշտ տեղափոխելու համար: Ուրեմն, այս հանգամանքը հաշուի առնելով, նրանք պէտք է կարողանան յստակ ու կենսունակ քաղաքական կուրս որդեգրել, այլապէս նոր ստեղծուած կուսակցութիւններն էլ, շատ չանցած, արժանանալու են ստաժաւոր հների բախտին ու վերածուելու են «քաղաքական դինոզաւրների», որոնք երբեմն իրենց մասին յիշեցնել են տալիս այն ժամանակ, երբ դաշտում իրական խաղացողներ չեն լինում:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթերօրին T: (626) 797-7680 massis2@earthlink.net

Մասիս ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ ՎԱՅԵ ԱԶԱՊԱՅԵԱՆ MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, \$100.00 (First Class) Canada \$125.00 (Air Mail) Overseas \$250.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Խուրչուղեան. «Իշխանութիւնը Բռնապետական Լինելու Ռեսուրս Էլ Չունի»

«Ժառանգութեան» անդամ Յովսէփ Խուրչուղեանը համարում է, որ կալանավազրից դուրս է եկել քաղաքական որոշման արդիւնքում: Այդ մասին նա ասաց «Ազատութիւն TV»-ի «Կիրակնօրեայ լրատուական» հաղորդման ժամանակ:

«Օրինակ, այն 13 կալանաւորուածի դէպքում իրենք կարողանում էին ինչ-որ ֆոկլորականութիւն անելով համոզել Արեւմուտքին, որ նրանք քաղաքատարկեալ չեն, այլ իրօք քրէական ինչ-որ յանցակազմ կայ, այս դէպքում արդէն բոլորը տեսան, որ սա իրենց մեթոտն է ուղղակի, սա ուղղակի հաշուեյարդարի մի տարատեսակ է, եւ եղան նաեւ բացայայտ յայտարարութիւններ, գիտէ՞ք՝ [Հայաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ] Միլսի յայտարարութիւնը, որ հնարաւոր է՝ Հայաստանի հանդէպ սանկցիաներ կիրառուել, եւ այլն, եւ այլն: Այդ ամբողջը չէր կարող չազդել այս իշխանութիւնների վրայ, որոնք ռեսուրս էլ չունեն բռնապետ լինելու, բռնատիրական երկիր կառուցելու: Ատրպէյճան չի Հայաստանը, չնայած քաղաքատարկեալների թիւով Հայաստանը գլորեցին հասցրեցին Ատրպէյճանին»:

Զինուած խմբի կողմից Ոստիկանութեան պարեկապահակալին ծառայութեան գնդի տարածքի գրաւմանը յաջորդած յուլիսեան երկշաբաթեայ հանրահաւաքների ընթացքում հատուկէնտ քաղաքական ուժեր ամբիոն բարձրացան, աջակցութիւն յայտնեցին «Սասնայ ծուր»-ին կամ գործընթացին ընդհանրապէս: Հարցին՝ դա ի՞նչ է նշանակում, ընդդիմադիր գործիչը պատասխանեց. - «Շատ, շատ տխուր իրողութիւն է մեր մօտ,



«Ժառանգութեան» անդամ Յովսէփ Խուրչուղեան

ուժերի մի մասի դէպքում՝ ակնյայտ կոպտացիայի գործընթաց եմ տեսնում իշխանութիւնների կողմից, գործարքը կայ, դեռ մինչեւ «Սասնայ ծուր»-ը արդէն տեսանելի էր, պառլամենտում ապագայ տեղերի բաժանելու եւ քվոտաներ յատկացնելու այդ պրոցէսը տեսանելի է՝ ստուերային, իհարկէ, բայց տեսանելի է»:

«Գործարքի մէջ են, կարծում էք», - այս դիտարկմանը Խուրչուղեանը արձագանքեց. - «Այո, կարծում եմ: Ես չեմ ուզենայ հիմա ուժերի անունները տալ, բայց ինձ թւում է՝ հասարակութիւնը արդէն ինքը հասկանում է ով ով է՝ դիրքորոշումից եւ գնահատականներից այդ ուժերի: Այնպէս որ, շատ տխուր է, որովհետեւ դրանց մէջ կան ուժեր, որոնք հետեւողական պայքար են ժամանակին մղել, եւ այլն, եւ այլն, եւ հիմա յանկարծ ինչ-որ ընդհանուր յայտարարի են եկել տարբեր հարցերի շուրջ»:

Յիշեցնենք՝ Յովսէփ Խուրչուղեանը գրաւի դիմաց ազատ արձակուեց Օգոստոսի 24-ի երեկոյեան:

Աւետիք Իշխանեան. «Յողերի Յանձնման Գործընթացը Առայժմ Սառեցուել Է

Իրաւապաշտպան Աւետիք Իշխանեանը յայտարարել էր, որ տեղեկութիւններ ունի, աղբիւրը չի բացայայտի, բայց շատ լուրջ է իրավիճակը. «Ես ձեզ վստահաբար եմ ասում, յատուկ յանձնարարութիւն է տրուել բոլոր տիպի ինստիտուտներին նախապատրաստելու յանձնումը: Շատ լուրջ է վիճակը: Կարող ենք մենք դիմադրել՝ արժանի կը լինենք լինելու պետութիւն»:

Aravot.am-ը խնդրեց նրան մանրամասներ ներկայացնել: Աւետիք Իշխանեանը պատասխանեց, որ մանրամասներ չի կարող ներկայացնել, քանի որ աղբիւրը չի կարող բացայայտել: Եւ չի կարող պատասխանել, թէ այդ հրահանգները այժմ կա՞ն, թէ՞ ոչ: «Ես այսպիսի տպաւորութիւն ունեմ, որ իրավիճակ է փոխուել, այդ իրավիճակը փոխուել է իմ կարծիքով՝ Ղարաբաղում ղեկավարութեան եւ դարաբաղցիների անհամաձայնութեամբ եւ նաեւ կարծում եմ՝ Հայաստանի ներքին ընդդիմութեամբ՝ տարբեր տիպի հաւաքների արդիւնքում: Կարծում եմ՝ այս ամէնը բերել է այն վիճակին, որ առայժմ այդ գործընթացը առնուազն սառեցուել է: Որովհետեւ, եթէ ի վերջոյ մենք գնահատենք փաստերի մակարդակով՝ ոչ ենթադրութիւններ, ճշմունքներ են եղել միակողմանի յանձնելու այն դէպքում, երբ Ատրպէյճանի ղեկա-



Իրաւապաշտպան Աւետիք Իշխանեան

վարութիւնը հռետորաբանութեամբ եւ բանակցութիւնների ընթացքում, իմ կարծիքով, գիշման կողմնակից չէր: Կարծում եմ, որ Հայաստանի իշխանութիւնները պատրաստ էին գիշումների, որովհետեւ իրականում, իրենց կարծիքով, դա գուցէ օբիեկտիւ է, չեն կարող դիմադրել»:

Աւետիք Իշխանեանի կարծիքով՝ չի բացառում, որ այդ գործընթացները վերսկսուեն. «Դա մի քանի հանգամանքներից է կախուած՝ ինչքանով Հայաստանի հասարակութիւնը ընդունակ է դիմադրել եւ չհնազանդուել: Առնուազն մինչեւ յաջորդ տարուայ չակերտների մէջ ասած ընտրութիւնները գործընթացը սառեցուած կը լինի»:

ՀԱԿ-ը Պահանջում Է, Որ Իշխանութիւնը Գնայ Արմատական Զիջման

Հայ Ազգային Կոնգրէսը (ՀԱԿ) Ընտրական օրէնագրի բանակցուած բարեփոխումները չկատարելու փոխարէն իշխանութիւնից պահանջում է գնալ արմատական գիշման եւ հրապարակել ընտրութիւններին մասնակցած մարդկանց ցուցակները:

Կոնգրէսի փոխնախագահ եւ խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանի խօսքով, եթէ իշխանութիւնները, պատճառ բերելով տեխնիկական խնդիրները, հրաժարուում են ներդնել մատնահետքերով ընտրողների նախագրանցման համակարգը, ուրեմն պէտք է հրապարակեն ստորագրուած մատնաները. - «Մենք պահանջում ենք, որ այն խնդիրը, որ 2003 թուականից մեր հանրութիւնը դնում է ձեր առաջ, որին դուք կատարողի ձեւով դիմադրել էք, չէք արել, հրաժարուել էք անել, որովհետեւ բոլորի համար հասկանալի է, որ ամբողջ կեղծարարութիւնը թաքնուած է համատեանների մէջ... Ուրեմն մենք պահանջում ենք, եթէ սա չէք կարողանում անել, որ դուք բաւարարէք ստորագրուած ցուցակների հրապարակումը»:

ՀԱԿ-ը պահանջում է նաեւ ապահովել այդ ցուցակների հիման վրայ բողոքարկման հնարաւորութիւնը այնպէս, ինչպէս կ'առաջարկեն քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչները: Եւ այդ դէպքում միայն հնարաւոր կը լինի 4+4+4 ձեւաչափով նոր համաձայնագրի ստորագրումը, որը, ըստ Զուրաբեանի, «թոյլ կը տայ միջազգային հանրութեանը աջակցութիւն ցոյց տալ այդ պրոցէսին»:

Դիտարկմանը, թէ մէկ տասնամեակից աւելի իշխանութիւնները տարբեր հակափաստարկներ են բերել, վկայակոչել են Վենետիկի յանձնաժողովը, պնդել են, թէ մարդու անձնական կեանքի գաղտնիութիւնը կը խախտուի, եւ հարցին, թէ ինչու հիմա պէտք է գնան այդ քայլին, Զուրաբեանն արձագանքեց, որ այժմ իրավիճակը «կտրուկ փոխուել է».

Պատանդ Մնացած Փոխստիկանապետը Երկու Բնակարան Է Գնել, 27 Միլ. Ստացել

«Հայկական ժամանակ» թերթը գրում է. «ՀՀ ոստիկանութեան պետի տեղակալ Վարդան Եղիազարեանը, որը ՀՀ ոստիկանութեան ՊՊԾ գնդում մօտ մէկ շաբաթ անցկացրեց, Բարձրաստիճան պաշտօնատար անձանց էթիկայի յանձնաժողով է ներկայացրել 2015 թուականի իր եկամուտների, ունեցուածքի յայտարարագիրը:

Յայտարարագրի ուսումնասիրութիւնից պարզ է դառնում, որ Եղիազարեանը բազմաբնակարան շէնքում երկու բնակարան է գնել, որոնցից մէկի համար վճարել է աւելի քան 27 միլիոն դրամ, իսկ միւս բնակարանի գնման արժէքը նշուած չի յայտարարագրում, այսինքն՝ թերի է լրացուած:

Փոխստիկանապետը նախորդ տարուայ սկզբում յայտարարագրել է 2.1 միլիոն դրամ, 2.5 հազար ԱՄՆ դոլար, 3.1 հազար եւրօ, որոնք տարուայ վերջում դարձել են համապատասխանաբար՝ 1.85 միլիոն դրամ, 3.15 դոլար, 4.3 հազար եւրօ:

Նախորդ տարի Վարդան Եղիազարեանը եկամուտի ստացել աշխատավարձից եւ նուիրատուութիւնից: Աշխատավարձը կազմել է 5 մլն դրամ: Նա 27.3 միլիոն դրամի համարժէք բնամթերքի տեսքով նուէր



ՀԱԿ փոխնախագահ Լեւոն Զուրաբեան

մեր քաղաքական հոտառութեանը եւ ըմբռնմանը իրավիճակի. արմատական փոփոխութիւններ կան՝ կապուած եւ? լարուած իրավիճակի (Ատրպէյճանը ցանկացած պահին կարող է գրոհել) հետ, եւ՝ խնդիրներ կան արդէն Հայաստանի ներսում, որոնք երեւում է, որ արդէն ափից դուրս են գալիս, որը իշխանութիւններին պէտք է դրդի ամենարմատական պահանջների կատարմանը: Մենք հիմա էդ հարցով բանակցում ենք, մենք դրել ենք էդ հարցերը իշխանութեան առաջ»:

Նորանկախ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխավորած Հայ ազգային Կոնգրէսը, ի դէպ, բացառում է 2017 թուականի ընտրութիւններից յետոյ ազգային համաձայնութեան կառավարութեան ձեւաւորումը «Հանրապետական» կուսակցութեան հետ, ինչի մասին յայտարարել էր Սերժ Սարգսեանը:

«Բացառուում ա», - ասաց Լեւոն Զուրաբեանը: - «Մենք ո՞նց կարող ա գողերի կամ ընտրակեղծարարների հետ յայտնուել նոյն թիւում: Ասենք, լաւ, վերցրեցինք, կոալիցիոն կառավարութիւն ստեղծեցինք՝ մի քանի միլիոն տարի իրանք են, մի քանի միլիոն տարի մենք ենք: Մենք ո՞նց ենք գործ անելու գողերի հետ: Խնդիրը էն ա, որ նրանք պէտք է բանտ նստեն»:



Փոխստիկանապետ Վարդան Եղիազարեան

է ստացել: Այս դէպքում եւս չի նշում, թէ բնամթերքը կոնկրետ ինչ է եղել: Փոխստիկանապետի նախորդ տարիների յայտարարագրերից էլ պարզ է դառնում, որ պաշտօնը ստանձնելու դրութեամբ (2014 թ.) նա ունեցել է 1 ամառանոց եւ մէկ բնակարան:

Եղիազարեանի կիրճ՝ Կարինէ Միրզոբեանը, նախորդ տարի յայտարարագրել է 2.2 միլիոն դրամ, 3 հազար ԱՄՆ դոլար եւ 3.8 հազար եւրօ: Վերջինս եկամուտ է ստացել բացառապէս աշխատավարձից, որը ողջ տարուայ համար կազմել է 1.8 միլիոն դրամ»:

ԼՈՒՐԵՐ

Լեռնային Ղարաբաղի Մէջ Ընդունուեցաւ Զամաներում Յայտարարելու Որոշումը



Արցախի խորհրդարանի նիստերու դահլիճը

Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովը իր արտահերթ նստաշրջանին ընդունած է համաներում յայտարարելու մասին որոշում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակման 25-րդ տարեդարձի կապակցութեամբ համաներում յայտարարելու առաջարկը, յիշեցնենք, ներկայացուցած էր նախագահ Քալո Սահակեանը:

Ինչպէս կը տեղեկացնէ «Արմէնփրէս» լրատուական գործակալութիւնը՝ վկայակոչելով Լեռնային Ղարաբաղի խորհրդարանի մամուլի ծառայութիւնը, նիստին ներկայ բոլոր 28 պատգամաւորները կողմ քուէարկած են որոշման, որ ուժի մէջ կը մտնէ պաշտօնական հրապարակման պահուն:

Լեռնային Ղարաբաղի խորհրդարանի խօսնակ Աշոտ Ղուլեանը նշած է, որ հանրապետութեան յիշարժան յոբելեաններուն սուրբար կը յայտարարուի համաներում, ու սոյն համաներման օրէնքը թիւ 6-րդն է եւ 4-ը՝ Հանրապետութեան հռչակման տօնի կապակցութեամբ:

«25-րդ տարեդարձը մեր անցած ճանապարհի լաւագոյն ամփոփումն է: Մենք բազմաթիւ դժուարութիւններ ու զրկանքներ կրած ենք այս մեծ ճանապարհին եւ բազում գոհողութիւններու գնով հասած՝ ներկայ իրողութիւններուն: Այս ամէնու գլխաւոր հերոսը Արցախի քաղաքացին է», - յայտարարած է Ղուլեանը:

ԼՂՀ Պաշտպանութեան Նախարար Ռազմական Գործողութիւններու Վերսկսման Զաւանականութիւնը Բարձր Է

Ռազմական գործողութիւններու վերսկսման հաւանականութիւնը միշտ առկայ է, աւելին՝ այն բարձր է. «Regnum» գործակալութեան տուած հարցազրոյցին այսպիսի յայտարարութիւն ըրած է ԼՂՀ պաշտպանութեան նախարար Լեւոն Մնացականեանը: Վերջինիս խօսքով՝ հակառակորդի այսօրու վարքագիծը թոյլ կու տայ եզրակացնել, որ «ան դեռ ամբողջութեամբ չէ հրաժարած իր մտադրութիւններէն»:



ԼՂՀ պաշտպանութեան նախարար Լեւոն Մնացականեան

Այդ մէկը կ'երեւի նաեւ անոնց կայտառութիւններէն. Եթէ նախապէս անոնք կ'ըսէին, որ յաղթանակ պիտի տանին երեք օրուայ ընթացքին, ապա այժմ նման յայտարարութիւններ այլեւս չեն հնչէր, եւ ես յոյսով եմ, որ անոնք վերջնականապէս կը հրաժարին իրենց մտադրութիւններէն», - «Regnum»-ի հետ զրոյցին նկատած է Մնացականեան:

Գերմանիա Մերժեց Թուրքիոյ Պահանջը

Շարունակուած էջ 1-էն

թեան» դէմ ԱՄՆ-ի գլխաւորած միջազգային գործողութիւններուն:

«Ոչ մէկ կապ կը տեսնեմ երկու հարցերուն միջեւ, այդ մասին յայտնած եմ նաեւ թուրք գործընկերներուն», Գերմանական հեռուստաայլիքներէն մէկուն տուած հարցազրոյցի ընթացքին ըսած

է Շթայնմայրը՝ աւելցնելով . - «Դաշնային խորհրդարանը պէտք է հաւանութիւն տայ, որպէսզի գինուորները շարունակեն իրենց ծառայութիւնը արտերկրի մէջ: Այդ նպատակով պատգամաւորները կը փափաքին այցելել ինձի լիքի մէջ գտնուող գինուորներուն: Իմ պարտականութիւնս պատգամաւորներուն նման հնարաւորութիւն ապահովելն է»:

Մամետիարով. «Ղարաբաղեան Կարգաւորման Գործընթացին Մէջ Բեկում Մտցնելու Զնարաւորութիւն Կայ»

«Փեթերսպուրկի մէջ Ռուսաստանի նախագահի միջնորդութեամբ կայացած հանդիպումէն ետք Ղարաբաղեան կարգաւորման բանակցութիւնները կարծես ճիշդ ուղիի վրայ են», - Թբիլիսի մէջ Վրաստանի արտաքին գործերու նախարար Միխէիլ Ճանելիձէի հետ բանակցութիւններու ավարտին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարած է Ատրպէյճանի դիւանագիտական գերատեսչութեան ղեկավար էլմար Մամետիարովը՝ փեթերսպուրկեան հանդիպումը բնութագրելով որպէս բանակցային գործընթացի «կարեւոր դրուագ»:

«Տրամադրուածութիւն եւ համոզմունք կայ, որ մենք ճիշդ ուղղութեամբ կը շարժինք, որն իր հերթին կրնայ բանակցային գործընթացը բեկման հանգեցնել: «Քաղաքական կամք. ահա այն

հիմնական գործճնը, զոր անհրաժեշտ է դարբաղեան կարգաւորման բանակցային գործընթացին բեկումը ապահովելու համար», - համոզմունք յայտնած է Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարը՝ պնդելով. - «Համապատասխան քաղաքական կամքի դրսեւորման եւ միջազգային իրաւունքի նորմերուն, արդէն իսկ ընդունուած բանաձեւերու ու փաստաթուղթերու, անոր կարգին, ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի բանաձեւերուն հանդէպ յարգանք ցուցաբերելու պարագային, մենք ի վիճակի կը գտնուինք ընդհանուր յայտարարի գալ, որու շնորհիւ տարածաշրջանին ներս խաղաղութիւն, կայունութիւն եւ բարգաւաճում կը հաստատուի: Այդ նախ եւ առաջ շահաւէտ պիտի ըլլայ Հայաստանի եւ Ատրպէյճանի ժողովուրդներուն համար»

«Ամէն Ինչ Ընել, Որպէսզի Սուրիահայերը Զաստատուին Զայրենիքի Մէջ»

Օգոստոս 29-ին ՀՀ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանի ղեկավարութեամբ տեղի ունեցաւ սուրիահայերու հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական յանձնաժողովի հերթական նիստը:

Երեւանի դպրոցներէն ներս սուրիահայ երեխաներու ընտելացման մասին զեկուցումով հանդէս եկաւ Երեւանի քաղաքապետարանի հանրակրթութեան վարչութեան աշխատակից Սուսաննա Գասպարեան:

2015 թուականին կատարուած աշխատանքներուն եւ 2016 թուականին նախատեսուող ծրագիրներուն մասին զեկուց Ներկայացուցին «Օքսֆամ Հայաստան» ընկերութեան ծրագիրներու պատասխանատու Մարգարիտա Յակոբեանեանը, «Մէյվ տը չիլտրըն» ընկերութեան ծրագիրները համակարգող Սիրանուշ Վարդանեան եւ «Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի հայաստանեան միջեկեղեցական կլոր սեղան» բարեգործական հիմնադրամի ծրագիրներու պատասխանատու Ալլա Սարգիսովան: Առաջարկուեցաւ ստեղծել ընկերային

ծառայող հիմնարկ, զոր սուրիահայերու հետ աշխատող բանիմաց եւ պատրաստակամ խումբեր կը պատրաստէ:

Նախարար Հրանուշ Յակոբեան անդրադառնալով Սուրիոյ մէջ տիրող իրավիճակին նշեց, որ եկեղեցւոյ եւ հասարակական կառույցներուն միջոցով առայժմ կը յաջողին լուծել կրթական հարցերը: «Հալչպում գործում է վեց վարժարան, մօտ 200 դպրոցահասակ երեխայ կայ: Հայերը տեղաշարժուած են դէպի Լաթաքիա, Քեսապ: Պէտք է մեր օգնութիւնը այնպէս կազմակերպենք, որ եթէ մեր հայրենակիցները որոշեն Հայաստան տեղափոխուել, կարողանանք լուծել նրանց կեցութեան, աշխատանքի, ուսման, սոցիալական հարցերը: Իմ խնդրանքն է գերատեսչութիւններին, կազմակերպութիւններին ու կառույցներին ղեկավարներին՝ սրտացաւօրէն վերաբերուել ու սպառնալ, ուղղորդող պատասխաններ տալ սիրահայերի դիմումներին, նամակներին, խնդրանքներին: Մեր բոլորի խնդիրն է՝ ամէն ինչ անել, որպէսզի նրանք Հայրենիքում հաստատուեն, արագ ինտեգրուեն»:

Աւստրալիա Փակած Է Իր Դռները Զալէպահայերու Առջեւ

Անցնող շաբաթներուն հիասթափութեան մթնոլորտ մը աճած է հալչպահայերու մօտ: Խնդիրը կապուած է այն մեծ քանակով մերժումներուն հետ, որ կը տրուին Աւստրալիա որպէս գաղթական երթալ ուզող եւ փաստաթուղթեր լրացուցած հալչպահայերուն: Այս մասին «Արեւելք» լրատու կայքէջը տեղեկութիւն տալով է Հալչպի իր աղբիւրէն: Աղբիւրը նաեւ փոխանցած է, որ մասնաւորապէս վերջին շաբաթներուն մեծ թիւով հալչպահայերու որպէս գաղթական Աւստրալիա մեկնելու դիմումները կտրականապէս մերժուած են:

Քիչ չէ թիւը այն դիմորդներուն, որոնք ամէն դժուարութիւն իրենց աչքը առնելով Հալչպէն Պէյրութ կը մեկնին եւ կը փորձեն շատ կարճ միջոցի մը մէջ լրացնել

ՄԱԿ-ի փախստականներու գրասենեակին կողմէ, իրենց տրամադրուած փաստաթուղթերը, որմէ ետք կը դիմեն Պէյրութի մօտ Աւստրալիական դեսպանատուն: Այս առումով կը հաղորդուի նաեւ, որ դիմումներու մերժումները կը կատարուին շատ արագ եւ 24 ժամուան ընթացքին դիմորդներ դեսպանատունէն այդ մասին տեղեկ կը պահուին: Կան նաեւ այլ ընտանիքներ, որոնց փաստաթուղթերը աւելի քան 3 ամիսներէ ի վեր ներկայացուած են դեսպանատուն եւ ցարդ, իրենց խնդրով յստակ տուեալներ չեն փոխանցուուի: Նշենք, որ ասկէ շուրջ երկու ամիս առաջ պատկառելի թիւով հալչպահայեր փախստականի կարգավիճակ ստանալով մեկնած էին դէպի աւստրալիական ափեր:

ՀՐԹԻՌՆԵՐ ԻՆԿԱԾ ԷԻՆ ՀԱԼԵՊԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄՕՏԱԿԱՅՔԸ



Չորեքշաբթի օր Հալեպի հայկական շրջանները դարձած են թիրախ ընդդիմադիր զինեալներու հրթիռարձակումներուն: Այս մասին «Արեւելք» տեղեկութիւն ստացաւ Հալեպի իր աղբիւրէն: Աղբիւրը հաղորդեց, որ Չորեքշաբթի չեմօնիջօրէին պայթուցիկ տակառներ ինկած են «Թէլէֆօն Հալապի» շրջանին մօտ՝ պատճառելով նիւթական ծանր վնասներ:

Տրուած ըլլալով, որ հրթիռները ինկած են Հալեպի Հայ Աւետարանական եկեղեցւոյ մօտ եղող տարածքին մէջ, «Արեւելք» կապ հաստատեց Սուրիոյ Հայ Աւետարանական համայնքի նախագահ Վերապատուելի Յարութիւն Սէլիմեանին հետ: Վերապատուելին, որ հաւատարմեց, թէ հրթիռներուն հետեւանքով մարդկային կորուստ-

ներ չեն եղած, չթաքցուց նաեւ, որ Հալեպի հայկական շրջանակներուն համար, Չորեքշաբթի օրը եղած է շատ ծանր օր մը: Ան մասնաւորապէս ըսաւ. «Այսօր բաւական դժուար օր էր մեզի համար եւ երկու հրթիռներ ինկան մեր եկեղեցիին մօտ: Դպրոցին բարձրագոյն յարկը մեծ թիւով երեխաներ քննութիւն կը ներկայացնէին եւ անոնք հրաշքով փրկուեցան»:

Վերապատուելի Սէլիմեան, որ հրթիռարձակումներէն անմիջապէս ետք հասած է դէպքի վայր, նկատել տուաւ, որ հրթիռները պատճառած են նիւթական մեծ վնասներ:

Նշենք, որ Հալեպի տարբեր շրջաններ եւս ենթարկուած էին ծանր հրթիռարձակումներու՝ իլեւրով 6 անձերու կեանքը եւ պատճառ դառնալով տասնեակ անգէն քաղաքացիներու վիրաւորման:

Լոս Անճելոսի Իրանահայ Միութիւնը



Շարունակուած էջ 1-էն

60-ամեայ ազգային, հայրենասիրական, մշակութային, բարեսիրական, կրթական եւ մարդասիրական երախտաշատ գործունէութիւնը ծանօթ է հայ համայնքին: Գործունէութիւն՝ որ մեծապէս գնահատուած է ազգային կառույցներու եւ նաեւ՝ անհատ բարերարներու կողմէ, որոնք իրենց իշխանական նուիրատուութիւններով զարկ կու տան համայնքի կեդրոնի ազգային առաքելութեան:

Այդ 60 երկար տարիներու տեւողութեան ձեռք բերուած

չնորհակալ վաստակի գնահատութիւնը չէ՞ միթէ, որ համայնքի միութեան ազգային առաքելութեան 60-ամեակի առիթով, երախտաշատ նուիրեալ բարերարներ՝ Տէր եւ Տիկ. Լուդովիկա եւ Տօքթ. Յակոբ Այնթապեանի անուններով կոչուեցաւ Լոս Անճելոսի Իրանահայ կեդրոնը: Այդ հինգ տասնամեակներու ընթացքին թափուած հետեւողական աշխատանքի գնահատութիւնը չէ՞ միթէ, որ յրեկինական նոյն առիթով, բարերարներ՝ Տէր եւ Տիկ. Օդրի եւ Վահան Կրէկլըրի անուններով անուանուի կեդրոնի Գրադարանն ու Խորհրդաժողով-

ՊԱՔՈՒՆ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ «ՍԵՒ ՅՈՒՅԱԿ»Ի ՄԷՋ ՆԵՐԱՌԵԼ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԼՂՅ ԱՅՑԵԼՈՂՆԵՐԸ

Ատրպէյճանական «ԱՊԱ» գործակալութեան հաղորդմամբ՝ Ատրպէյճանի Արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարութիւն ըրած է՝ կապուած Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութեան 25-ամեակի տօնակատարութիւններու հետ:



Ատրպէյճանի ԱԳՆ-ն յայտարարած է, որ այն մարդոց անունները, որոնք «անօրինական կերպով մուտք կը գործեն Ատրպէյճանի տարածք»՝ մասնակցելու ԼՂՀ-եան անկախութեան 25-ամեակի միջոցառումներուն եւ Օգոստոսի վերջ Սեպտեմբերի սկիզբին կաշառալիք միջազգային համաժողովին, պիտի ներառուին «անցանկալի անձանց» ցուցակին մէջ: Այս մասին յայտարարած է Ատրպէյճան-

նի ԱԳՆ մամուլի ծառայութեան ղեկավար Հիքմետ Հաճիբ:

Վերջինս յայտարարած է, թէ այդ միջոցառումը «կը վնասէ» ԼՂ հակամարտութեան կարգաւորման գործընթացին, որով կը զբաղուի ԵԱՀԿ Մինսքի խումբը:

Վերջինս կոչ ըրած էր համաժողովին հրաւիրուածներուն յարգել միջազգային չափանիշները եւ գերծ մնալ «Ատրպէյճանի գրաւուած տարածքներ» այցելութիւններ կատարել:

Հալեպի Մէջ Ձոհուած Է Հայ Զինծառայող Յարութ Պաղտոյեան

Հալեպի շուրջ եղած մարտերուն ընթացքին զոհուած Յարութ Պաղտոյեանի մարմինը վաղը պիտի յանձնուի հողին: Այս մասին «Արեւելք» տեղեկութիւն ստացաւ Հալեպի իր աղբիւրէն:

Նշենք, որ Ռաքթայի ծնունդ եւ Սուրիոյ պատերազմին պատճառով Հալեպ տեղափոխուած հայ զինծառայողին ճակատագիրը, շուրջ մէկ ամիս է վեր կը շարունակէր մնալ անյայտ: 1992 թուականի ծնունդ Յարութ (հօր անունը՝ Մանուկ) Պաղտոյեան ասկէ շուրջ ամիս մը առաջ անհետացած է:

Սուրիոյ բանակի զինուորը ծառայած էր Իտլիպ, Տարապ եւ Դամասկոս քաղաքներուն մէջ, ու ան վերջին անգամ տեսնուած է Հալեպի մէջ:

Նշենք, որ անցող մէկ ամսուան ընթացքին այս երկրորդ պարագան է, որ կը գրանցուի եւ 3 շաբաթ



առաջ Յարութ Քահքէճեան անունով հալեպահայ այլ զինուոր մը նոյնպէս անհետացած էր: Քահքէճեան կը մասնակցէր Հալեպի «Ալ Հըքմէ» վարժարանի շրջանի պաշտպանութեան մարտերուն, եւ անոր հետքը կորսուած է անցնող 1 Օգոստոսին ի վեր:

ներու Սենեակը: Նոյնպէս, որ Պատուոյ Հիւրերու եւ Ընթերցանութեան Սենեակը կոչուի Գալուստ Բաբախանեան ընտանիքի անունով եւ վերջապէս, Լուդովիկա եւ Տօքթ. Յակոբ Այնթապեան Կեդրոնի Գլխաւոր Նախասրահը կոչուի Տիար Սինան Սինանեանի անունով:

Արդարեւ, նշեալ անուանումները, յատուկ եկեղեցական արարողութիւններով կատարուեցան Առաջնորդներ՝ Յովնան Արք. Տէրտէրեանի եւ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ, որուն յաջորդեց յրեկինական հանդիսութիւնը, որ սկիզբ առաւ Սուրէն Մկրտիչեանի կատարողութեամբ ԱՄՆ-ի եւ Հայաստանի Հանրապետութեան քայլերգներով, ապա Յովիկ Կապիբեանի բարի գալուստի խօսքով եւ հանդիսավար Ալպեր Աբգարեանի հրակերով: Բարեջան Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանի սեղաններու օրհնութեամբ սկսած ճաշկերոյթը, որուն ընթացքին իրենց շնորհակտրանքի, մեծարանքի, գնահատութեան եւ շնորհակալութեան ելուցիներով խօսք առին Հայաստանի Հանրապետութեան

Հիւպատոսարանի կողմէ Արմէլա Սահակեան, իր ամուսնութեան 50 ամեակի առիթով յրեւեար՝ մեծայարգ բարերար Տօքթ. Յակոբ Այնթապեան, Ներկայացուցչական ժողովի մեծայարգ անդամ վարդան Ղարապետեան եւ Տօքթ. Արմինէ Ղարապետեան: Նաեւ ելուցիներ ունեցան Մայքլ Անթոնովիչ, ձիւմ ՄըքՏոննէլ (Լոս Անճելոսի Ոստիկանապետ) Տօքթ. Վոկըն Կրէկոր, Սինան Սինանեան եւ եզրափակիչ օրհնութեան գիրով՝ Մուշեղ Արք. Մարտիրոսեան:

Գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը բերին Արա Մելգոնեան (հայկական պար) Սուրէն Մկրտիչեան (երգ) եւ Մերուժան (Զուլթակ):

Արժանավայել մեծարանքի յրեկինական ձեռնարկ մը արդարեւ: Այդ առիթով, կրկնակի կը շնորհակտրենք մեծարեալ բարերարներ՝ Տէր եւ Տիկ. Լուդովիկա եւ Տօքթ. Յակոբ Այնթապեաններու անուանութեան 50-ամեակը, «Լուդովիկա եւ Տօքթ. Յակոբ Այնթապեան Կեդրոնի» հոգաբարձութիւնը մաղթելով բարի երթ եւ վերելք:

ԽՈՒՃԱՊԻ ՅԱՆԳԵՐԳՆԵՐԷՆ ԶԱՏ, ԻՆՉԻ՞ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ



ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Վերջին օրերուն Երեւանի իշխանական նեղ շրջանակներուն մէջ կը քննարկուի յառաջիկայ Հոկտեմբերին վարչապետ Յովիկ Աբրահամեանի «տուն երթալու» հաւանականութիւնները: Աւելին քաղաքական զարգացումներուն հետեւողներէն շատեր տարբեր առիթներով կը խօսին կազմուելիք կառավարութեան մէջ կարգ մը «ազդեցիկ» դէմքերու յայտնութեան կամ ըսենք, անցնող տարիներուն «նուիրականացած» կարգ մը նախարարներու իրենց պաշտօնէն հեռանալու մասին:

Այս բոլորին դիմաց մինչ երկրի քաղաքական կեանքը «հանդարտօրէն» արթննալու նշաններ ցոյց կու տայ, ՀՀ նախագահը «հանգիստ խղճով» իր արձակուրդը կը շարունակէ:

Ընդդիմադիրը շրջանակներուն համար «բարդ» եւ անցումային համարուած այս փուլին, նախագահին երկրէն այսքան երկար բացակայելու փաստը, նաեւ կը յուշէ, որ իշխանութեան «գործերը լաւ են»:

Հակառակ տարբեր հարթակներէ հնչող քննադատութիւններուն, Հայաստանի գործընկեր եղող երկիրները իրենց ուղղած սլաքներով ցարդ չեն հատած ընդունելի «կարմիր գիծ»ի սահմանները:

Այսինքն կատարուած գնահատականները եւ յատկապէս Սարիթաղի ու «Խորենացի» փողոցներուն վրայ կատարուած դէպքերուն առթիւ եղած դատապարտումները, չանցան զգուշացումի «համաձայնեցուած» ընդհանուր պարունակը: Համաձայնեցուած կ'ըսենք, որովհետեւ արեւմուտքին համար Հայաստան, ինչպէս երէկ այսօր ալ կը շարունակէ մնալ Ռուսական «ընդհանուր աւա-

զան»ին մէկ հատուածը:


Վերադառնալով Հայաստանի ներքին քաղաքական կեանքին, յառաջիկայ սպասելի փուլը «Տեղական ինքնակառավարման մարմիններ» (ՏԻՄ) ընտրութիւններն են, որոնց աւարտին տեղի պիտի ունենայ ուժերու վերադասաւորում եւ հոն է, որ պիտի ճշդուին այն ուժերը, որոնք բաւարար քաղաքական կամք պիտի դրսեւորեն մտնելու 2017 թուականին տեղի ունենալիք խորհրդարանական ընտրութեանց ընդհանուր «մարտադաշտ»:

Այս բոլորէն բացի յստակ է նաեւ, որ նախագահ Սարգսեանի Մոսկուա կատարած վերջին այցին ընդհանուր արդիւնքները տակաւին հրապարակ չեն հանուած: Մէկ կողմէ ռուսական իշխանական մամուլին «մեծ լուծութիւն»ը եւ միւս կողմէ իշխանական շրջանակներուն այս թեմային մասին ընդհանրապէս չարտայայտուելը, զգացնել կու տան, որ յառաջիկայ հանգրուանին Արցախի վերաբերեալ նոր զարգացումներ կրնան պատահիլ: Խնդիրը միայն այս «խորհրդաւոր» լուծութեամբ պայմանաւորուած չէ, այլ կայ նաեւ արցախեան սահմանին անցեալ շրջանին համեմատած առկայ ընդհանուր «հանդարտ» վիճակը, որ ետպատերազմեան լուծութեան մը բոլոր տուեալներն ունի:

Նոյն թեմայի առումով ընդդիմադիր մէկէ աւելի գործիչներ (մանաւանդ «Նախախորհրդարան»ի պատասխանատու անձինք եւ անոնց մօտիկ համարուող անձնաւորութիւններ) առիթ չեն փայցներ (նոյնիսկ Վարդաշէնի բանտէն) զգուշացնելու, որ յանկարծ «յառաջիկայ օրերուն Սերժ Սարգսեան ժողովուրդին պիտի ըսէ, թէ

Շար.ը էջ 18

ԲՆԱՊԱՀԱՅԱՆՆԵՐ՝ ԱՄՈՒԼՍԱՐԻ ՈՍԿԻԻ ՀԱՆՔԻ ՇԱՐԱԳՈՐԾՈՒՄԸ ՍՊԱՌՆԱԼԻՔ Է ՍԵՒԱՆԱՅ ԼԻԾԻՆ ՀԱՄԱՐ



Բնապահպանները կ'ահագանգեն՝ Ամուլսարի ոսկիի հանքի շահագործումը սպառնալիք է կենսաբազմազանութեան եւ առաջին հերթին Սեւանայ լճին համար:

Անոնց կարծիքով, առողջարանային Ջերմուկէն ընդամէնը եօթ քիլոմետր հեռու գտնուող հանքավայրի բացասական հետեւանքները երկար սպասել չեն տար:

Համահայկական բնապահպանական ճակատ քաղաքացիական նախաձեռնութեան անդամ Լեւոն Գալստեանին խօսքով՝ առաջին վնասը կը հասցնի Սեւանի քաղցրահամ ջուրին՝ «Այդ հանքավայրից մօտաւորապէս մի քիլոմետր հեռու Որոտան - Արփա - Սեւան թունելը, եւ էդ արդէն թթուային ջրերը կ'ազդեն ոչ միայն թունելի ինֆրասթրուքթուրային կառուցանքի քայքայման տեսանկիւնից, այլ նաեւ էդ ջրերը կը տեղափոխուեն բուն թունելի մէջ եւ կը փոխեն էդ թունելով տեղափոխուող ջրերի որակը եւ յետոյ կը տեղափոխուեն Սեւանայ լիճ՝ ազդելով նաեւ Սեւանայ լճի ջրի որակի վրայ»:

Բնապահպանն յայտնեց, թէ այս պահուն ոչ ոք կրնայ ըսել, թէ ինչպէս կը փոխուի Սեւանի ջուրին որակը՝ ռիսքերու յստակ գնահատում չէ կատարուած, զոր կը նշանակէ, որ ինչպէս իրենց՝ բնապահպաններուն, այնպէս ալ հակառակ կողմին պնդումները կրնան ստոյգ չըլլալ:

«Մենք համոզուած ենք, որ վտանգը կարող է շատ լուրջ լինել եւ ինքը անկառավարելի է: Մենք կարող է ունենանք Սեւանայ լճի ջրի որակի լուրջ փոփոխութիւններ՝ դէպի թթուայնացում», - յայտնեց Գալստեան:

Բնապահպանները նաեւ իրաւական բացեր նկատած են Ամուլ-

սարի հանքավայրին շահագործման ծրագիրէն ներս: Ջերմուկուցի բնապահպան, իրաւաբան Նազելի վարդանեան կը շեշտէ, որ «Սեւանի մասին» օրէնքով լիճի ջրահաւաք աւազանին մէջ խստիւ կ'արգիւրի ցանկացած արդիւնակաւորութիւն, թափօններու տեղադրութիւն, վերամշակում եւ այլն՝ «Եւ պատահական չէ, որ 2012 թուականին Սեւանի յանձնաժողովը բացասական եզրակացութիւն է տուել: Եւ դրա վերաբերեալ առաջին փորձաքննութեան եզրակացութեան մէջ նշուած է որպէս պարտադիր պայման, որ երաշխիքներ ներկայացուեն, որ Սեւանը չի աղտոտուելու: Դրանից յետոյ չգիտեմ ինչ արեցին, որ նորից դիմեցին Սեւանի յանձնաժողովին եւ ստացան դրական եզրակացութիւն»:

Յանձնաժողովին եզրակացութեան որպէս արդիւնք իրաւաբանը կը տեսնէ «պետական պատուէր»՝ պնդելով, թէ կառավարութեան բոլոր որոշումները, փորձաքննական եզրակացութիւնները ակնյայտօրէն յարմարեցուած են ծրագիրին՝ «Ամէն ինչ անում է կառավարութիւնը, որ հասարակութեան բերանը փակի եւ ասի, որ այդ խնդիրը լուծուած է: Դրա համար մենք գալիս ենք եզրակացութեան, որ սա պետական պատուէր է»:

Բնապահպաններուն մտահոգութիւնները, սակայն չեն կիսեր Ամուլսարի հանքավայրը շահագործող բրիտանական «Լիտիան ինթրընշնըլ»-ի դուստր ընկերութեան մէջ՝ «Լիտիան Արմենիա»-ի մէջ:

Ընկերութեան կայուն զարգացման գծով աւագ տնօրէն Արմէն Ստեփանեան «Ազատութեան» փո-

Շար.ը էջ 18

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs


<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաժողտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ԹՈՒՐԲԻՈՅ 10.000 ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ 4.600-Ը ՀԱՅԿԱԿԱՆ ԵՆ



Պոլսահայ լրագրող, «Ակօս» թերթի հիմնադիր Հրանդ Տինքի մահին ետք, անոր ընտանիքին հիմնած եւ Մթամպուլի մէջ գործող Հրանդ Տինքի անուան հիմնադրամը նախաձեռնած էր «Անատոլիոյ մշակութային ժառանգութիւնը» անուանուած յատուկ նախագիծ, որուն ընթացքին հիմնադրամին աշխատակիցները բացայտած եւ հաշուարկած են ամբողջ Թուրքիոյ տարածքին ազգային փոքրամասնութիւններու ձգած պատմամշակութային շինութիւններուն քանակն ու ներկայ վիճակը:

Այս մասին կը յայտնէ «Ակօս» թերթը:

Հիմնադրամին հրապարակած ցուցակին համաձայն, Թուրքիոյ մէջ առկայ 10.000 պատմամշակութային կոթողներէն 4.600-ը հայկական են, 4.100-ը՝ յունական, 650-ը՝ ասորական, 300-ը՝ հրէական:

Նախագիծի համակարգող Մերուէ Քուրտը եւ հետազոտողներ Թունա Պաշրպէքը, Ջէյնապ Օղուզը, Ալէքսանդրոս Գամպուրիսը եւ Վահագն Քէշիշեանը նախագիծին ծիրին մէջ, երկու տարի շարունակ ուսումնասիրած են Օսմանեան պետական արխիւները, ինչպէս նաեւ մեկնած Յունաստան եւ Զուիցերիա՝ ծանօթանալու արտասահմանեան արխիւներուն:

Մերուէ Քուրտի խօսքով՝ գրեթէ բոլոր պատմական այս կոթողներուն անունները այլեւս թրջացուած են:

Անոր խօսքով՝ այս պատմական յուշարձաններուն զգալի մասը մատնուած է անուշադրութեան եւ լուրջ կարիք ունի պահպանութեան տակ աւելուելու:

Հետազոտութեան համաձայն՝ ամենաշատ հայկական պատմական շինութիւնները առկայ են Մուշի մէջ՝ 401 պատմական կառոյց, այնուհետեւ Պիթլիսի՝ 325 շինութիւն, Խարբերդի՝ 323 հին հայկական շինութիւններով: Ասոնց կը յաջորդեն Սեբաստիան Երզնկան, էրզրումը, Կեսարիան, Տերսիմը: Յուցակը կ'եզրափակէ վանը՝ 185 կառոյցով:

Հիմնադրամը, նախագիծին ծիրին մէջ, հրապարակած է յատուկ քարտէշ, ուր ցուցադրուած են հայկական, ասորական, յունական եւ հրէական պատմական կոթողներու վայրերը, այդ քարտէշին վրայ առկայ են եկեղեցիներ, վանքեր, գերեզմանոցներ, անգամ՝ հին հայկական դպրոցներու եւ որբանոցներու շէնքեր:

Հիմնադրամի պատասխանատուները յայտարարած են, որ իրենց ստեղծած նոր արխիւը բաց է բոլորի համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԱՇԽԱՐՀԻՆ ԿԸ ԾԱՆՕԹԱՑՆԷ ԱՄՆ-Ի SMITHSONIAN-Ը



Young dancers prepare to perform at the Areni Wine Festival in the Vayots Dzor region, October 2015. Photo by Sossi Madzounian, Smithsonian

Հայաստանն ունի շատ հարուստ ու երկնային մշակութային ժառանգութիւն. ատիկա ոչ միայն մշակութային գլուխգործոցներն են, այլեւ՝ մարդոց կենսակերպը, բանաւոր պատմութեան քերթը, պարը, կենցաղն ու սնունդը:

Հայաստանը ունի հարուստ մշակույթ, «Ամերիկայի Ջայն»-ին պատմած է Մոլլի Ֆաննոնն՝ աշխարհահռչակ «Smithsonian» ամերիկեան հաստատութեան միջազգային կապերու բաժնի ղեկավարը.

«Հայաստանի պարագային ատիկա ոչ միայն մշակութային գլուխգործոցներն են, այլեւ՝ մարդոց կենսակերպը, բանաւոր պատմութեան քերթը, պարը, կենցաղն ու սնունդը»:

Ըլլալով համաշխարհային մշակութային ժառանգութեան պահպանման առաջատարը, «Smithsonian»-ը Հայաստանի հին ու հարուստ մշակույթը ուշադրութեամբ կ'ուսումնասիրէ ու կը փորձէ պահպանել եւ աշխարհին փոխանցել: Այդ նպատակով ԱՄՆ-ի կառավարութեան նիւթական աջակցութեամբ՝ «Smithsonian» հաստատութիւնը, Հայաստանի կառավարութեան հետ համատեղ, նախաձեռնած է «Իմ Հայաստանը» նախագիծը.

«Իմ Հայաստանը» նախագիծին հիմք պիտի ծառայէ մշակութային ժառանգութեան հիմնարար տարրը՝ պատմութեան քերթը: Մենք կը պատմենք հայկական ուսեստներու, կենցաղի, արուեստի, կրօնի մասին պատմութեան քերթը ողջ աշխարհին»:

Համագործակցութեան ծիրին մէջ՝ «Smithsonian»-ի կողմէ այս ամառ ԱՄՆ-ի մայրաքաղաքին մէջ կազմակերպուած մշակութային փառատօնին՝ երգերով հանդէս եկած էին հայկական երկու խումբեր՝ «Թմբաթա»-ն Երեւանէն եւ «Armenian Public Radio»-ն Քալիֆորնիայէն: Բաց ատիկա դեռ ամէնը չէ, «Smithsonian»-ը կը նախատեսէ Միացեալ Նահանգներու մէջ 2018 թուականի մշակութային փառատօնը ամբողջութեամբ նուիրել Հայաստանին:

«Մենք Հայաստանի մշակույթը պիտի ներկայացնենք մշակութային փառատօններուն, Հայաստանին նուիրուած ցուցահանդէսներ կազմակերպելու մեր թանգարաններուն մէջ այստեղ եւ աշխարհով մէկ, կը նախատեսենք նոյնիսկ այդ ցուցահանդէսներուն ընթացքին՝ Հայաստանէն հրաւիրուած մասնագէտներու շնորհիւ՝ թանգարաններուն մէջ ստեղծել իսկական հայկական մշակութային մթնոլորտ», ըսած է Մոլլի Ֆաննոնն:

Յատուկ ուշադրութիւն պիտի

յատկացուի հայ երիտասարդները մշակութային ժառանգութեան պահպանման գործընթացին մէջ ներգրաւման:

«Հայ երիտասարդութեան ներգրաւմը այս գործընթացին մէջ կենսական նշանակութիւն ունի, քանի որ նպատակներէն մէկը հայ առաջնորդներու յաջորդ սերունդի գարգացումն է», ըսած է «Smithsonian»-ի ներկայացուցիչը:

Մոլլի Ֆաննոնի խօսքով, այդ գործին մէջ հաստատութեան հիմնական գործընկերն է Երեւանի մէջ գործող Ստեղծարար ճարտարագիտութիւններու ԹՈՒՄՕ կեդրոնը, որուն յաջողութիւնները ուղղակի հիացուցած էին Ուաշինկթընի մէջ բոլոր գործընկերները. «ԹՈՒՄՕ-ն կրնայ օրինակ ծառայել ամբողջ աշխարհի մէջ դպրոցականներու մշակութային զարգացման կազմակերպման համար: Մենք կը սորվինք ԹՈՒՄՕ կեդրոնէն եւ այդ փորձը կը կիրառենք այստեղ»:

«Smithsonian» հաստատութեան գործունէութեան նպատակներէն մէկն է նաեւ ցոյց տալ, որ մշակույթը ոչ միայն արժէք է ինքնին, այլեւ կրայ տնտեսական օգուտ բերել երկրին եւ տեղական համայնքներուն. «Մենք կ'ուզենք զարգացնել Հայաստանի մշակութային ոլորտը՝ կապելով զայն զբօսաշրջութեան՝ նոր աշխատատեղեր ստեղծելով մշակութային զբօսաշրջութեան ոլորտին մէջ»:

Եթէ մայրաքաղաք Երեւանի մէջ գտնուող մշակութային ժառանգութիւնը հասանելի է արտերկրեայ զբօսաշրջիկներուն, ուրեմն Հայաստանի միւս շրջաններուն մէջ գտնուող արուեստի ու մշակույթի գլուխգործոցներուն զբօսաշրջիկները յաճախ կ'ամ անծանօթ կը մնան, կամ ալ՝ կ'այցելեն անոնց քանի մը ժամով: Իբրեւ արդիւնք՝ տեղի բնակչութիւնը որեւէ օգուտ չի ստանար զբօսաշրջիկներու բազմութենէն:

«Մեր նպատակն է ոչ թէ Երեւան այցելող զբօսաշրջիկներուն հոսքը շրջաններ տեղափոխել, այլ Հայաստան նոր զբօսաշրջիկներ բերել, որոնք հիմնական ժամանակը պիտի անցնեն ոչ թէ Երեւանի մէջ այլ՝ մայրաքաղաքէն դուրս՝ ծանօթանալով հայկական ժողովրդական մշակութային ժառանգութեան», պատմած է Ֆաննոնն: Նախագիծին ծիրին մէջ կը նախատեսուի նաեւ 3D ֆորմատով թուանկայնացնել հայկական մշակույթի եւ պատմութեան գլուխգործոցները: Մոլլի Ֆաննոնի խօսքով, ատիկա աւելի պիտի հետաքրքրէ հաւանական զբօսաշրջիկները Հայաստան այցելելու:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ԹՈՒՐԲԻՈՅ ՄԷՋ ՊԻՏԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԻ «ՔԱՐԱԿԱՆ 1915» ՖԻԼՄԸ

Հոկտեմբեր 7-ին Թուրքիոյ մէջ պիտի ցուցադրուի Հայոց Յեղասպանութեան մասին պատմող առաջին ֆիլմը՝ «Քարական 1915»-ը: Վկայակոչելով թրջական «Internet Haber» լրատուական քաղաքը, Ermenihaber.am կը տեղեկացնէ, թէ ֆիլմի սենարին հեղինակն ու բեմադրիչը իսմայիլ Կիւնեշն է, արտադրողը՝ Այնուր Կիւնեշը:



Ֆիլմին մէջ օգտագործուած երաժշտութիւնները կը պատկանին երաժշտահան Մուրէն Ասատրեանին, գլխաւոր դերեր ունին Մուրաթ Հանը, Այնէ Աքընը, Իբրահիմ Քէնտրիմի, Իփէք Թուզճուօղլուն, Ֆաթիհ Այսանը, Ալի Քեմալ Երըմազը եւ Մերիչ Պաշարանը: 1915-ի մասին Թուրքիոյ մէջ նկարահանուած առաջին ֆիլմը հանդիսացող «Քարական 1915»-

ին մէջ Հայոց Յեղասպանութիւնը կը ներկայացուի իբրեւ բռնի տեղահանութիւն: Ֆիլմին մէջ կը պատմուի Առաջին աշխարհամարտի ընթացքին Սեւ Մովու ափին գտնուող Կիբեսունին մէջ բնակող 200 հայ կանանց ու երեխաներու դէպի Հալէպ երկարող փորձութիւններով լի բռնազաղթին մասին:

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Հ.Մ.Մ.-Ը ՆՇԵՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԸ



Հայ Մարմնամարզական Միություն (Հ.Մ.Մ.) մեծ ընտանիքն այս տարի կը նշէ իր հիմնադրութեան 95ամեակը: Այս նշանակալից տարեդարձին առիթով Փաստինայի Հ.Մ.Մ.ի վարչութիւնը ընկերային խրախճանքի երեկոյ մը կազմակերպած էր, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, 26 Օգոստոս, 2016, «Կարօ Սողանալեան» սրահին մէջ:

Օրուան հանդիսավար Հ.Մ.Մ.ի ատենապետ ընկ. Վարդան Գօճապապեան իր բացման խօսքին մէջ ջերմօրէն ողջունեց ներկայ մարզասէր խումբերամ հասարակութիւնը, ապա բեմ հրաւիրեց մարզական դիւանի պատասխանատու ընկ. Վահէ Աջապահեանը: Ան հակիրճ կերպով անդրադարձաւ Հ.Մ.Մ.ի առաքելութեան եւ ազգօգուտ ծառայութեան սփիւռքի հայաշատ գաղութներուն մէջ: Այս առթիւ նշեց նաեւ որ շուտով Հ.Մ.Մ.ի ֆուտպոլի եւ պասքէթպոլի խումբերն Քանադայի մեկնին, Մոնրէալ քաղաքին մէջ բարեկամական մրցումներ ունենալու տեղույն խումբերուն հետ:

Հ.Մ.Մ.ի կեդրոնական վարչութեան նախկին ատենապետ եւ Հ.Մ.Մ.ի պատմութեան գիրքի հեղինակ վաստակաշատ վեթերան ընկ. Տիգրան Սարաֆեան իր ելոյթին մէջ դրուատեց տիպար մարզիկի առանձնատկութիւնները: Ան

բնութագրեց Հ.Մ.Մ.ականները որոնք անցնող 95 տարիներուն ընթացքին որպէս սկաուտ եւ թէ մարզիկ, միշտ մնացած են պատնէշին վրայ, բարձր պահելով տիպար հայրենասէրի եւ քաղաքացիի անունը ու իրենց պատկանած միութեան վարկն ու պատիւը: Այս բոլորի փայլուն ապացոյցներն են Հ.Մ.Մ.ի տարած յաղթանակները տարբեր մարզախաղերու մէջ ազգային, տեղական եւ թէ միջազգային մակարդակներու վրայ: Այնուհետեւ յարատեւութիւն եւ յաջողութիւն մաղթեց Փաստինայի Հ.Մ.Մ.ի օգտաշատ ծրագիրներուն, յատկապէս Քանադայի մէջ կայանալիք յառաջիկայ օրերու բարեկամական մրցումներուն:

Երեկոն խանդավառեց գաղութիս շնորհալի երգիչներէն՝ Աւօ Մկրտչեան, որուն ազգային, ժողովրդային եւ յեղափոխական երգերը բարձր տրամադրութիւն ստեղծեցին լեյկ լեցուն սրահի մարզասէր հասարակութեան մօտ: Ստեղծուած բարձր տրամադրութեան նրբեւ եղան սրտաբուխ նուիրտութիւններ Հ.Մ.Մ.ի բարգաւաճման ֆոնտին

Այս առթիւ կը շնորհակտորենք սոյն յիշարժան երեկոյի կազմակերպիչները, մասնաւորաբար Հ.Մ.Մ.ի Տիգրանից Օժանդակ Մարմնի անդամուհիները:

«ԹԵԿԱՆԻԿ»-Ը՝ ԳԼԵՆԴԵԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՌԱՏՕՆԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՒՄ



Ռեժիսոր Զիւան Աւետիսեանի «Թեկանիկ» ֆիլմն ընդգրկուել է Գլենդելի միջազգային կինոփառատօնի մրցութեան ծրագրում՝ «Լաւագոյն արտասահմանեան ֆիլմ» անուանակարգում: Այս մասին տեղեկանում ենք ֆիլմի ֆէյսբուքեան էջից:

Կինոփառատօնն անցկացուելու է սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 5-ը: «Թեկանիկ»-ը ցուցադրուելու է հոկտեմբերի 4-ին:

Պատերազմական իրավիճակում յայտնուած հայկական փոքրիկ գիւղի մարդկանց, նրանց սիրոյ եւ անձնագոհութեան մասին պատմող «Թեկանիկ» ֆիլմն արդէն արժանացել է մրցանակների, այդ թւում՝ Hollywood International Moving Pictures Film Festival -ում

լու: Շատերը կ'աշխատէին իբրեւ համալսեր, ինչպէս Յակոբեանի նկարին մարդիկը, կ'ապրէին թշուառ պայմաններու մէջ եւ կազմակերպուած էին աշխատաւորական միութիւններու մէջ (էսնաֆ)՝ իրենց շահերը պաշտպանելու համար: Անոնց մեծամասնութիւնը վասպուրականէն եւ Տարօնէն կու գար: Դաւիթեան դիտել տուաւ, որ այս պանդուխտներուն հանդէպ հետաքրքրութիւնը բազմակողմանի էր, օրինակ բերելով պոլսահայ արուեստի ուսուցիչ Փիլիթո Պելլոյի (1831-1909) մէկ ջրանկարը, որ կը պատկերէր Բերայի հայկական գերեզմանատան մը մէջ պարող ու նուագող խումբ մը հայ համալսեր, որոնք մեռելոց կը նշէին: Մինչ բազմաթիւ մտաւորականներ ժխտական վերաբերում ունէին պանդուխտութեան հանդէպ՝ իբրեւ Հայաստանի բնակչութեան պարպումի նշան, Դաւիթեան նշեց վիպապաշտութենէն ազդուած նախորդ շրջանի մտաւորականներու խումբի մը եւ աւելի ուշ իրապաշտներու մօտեցումներուն միջեւ առկայ տարբերութիւնները: Առաջին խումբին յատկանշական մէկ գործը, ուր պանդուխտները վիպապաշտ եւ գրեթէ կրօնական ակնոցով դիտուած էին, Մարտիրոս Խաչմերեանի գիրքն էր՝ «Կեանք հայ պանդուխտաց» (Կ. Պոլիս, 1876): Իր գործին մէջ, Խաչմերեան պանդուխտները երեք դասակարգերու կը բաժնէ: Առաջինը այն պանդուխտներն են, որոնք կը գաղթեն, շարաչար կ'աշխատին, իրենց վաստակածը ընտանիքներուն կը դրկեն եւ ի վերջոյ տուն կը վերադառնան: Երկրորդ տեսակը կը դժուարանայ յարմարելու նոր միջավայրին, կը շահագործուի եւ չի յաջողիր բաւականաչափ շահիլ՝ տուն վերադառնալու համար, մինչ երրորդ դասակարգը ընտանիքն ու հայրենիքը կը մոռնայ եւ կ'անհետանայ: Դաւիթեան պնդեց, որ Խաչմերեանի գիրքին էութիւնը խտացած է անոր կողքին ներկայացուած «Մայր

Շար.ը էջ 19

ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ ՓԱՌԱՏՕՆ

Organized By
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԿԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

SUNDAY SEPTEMBER 18, 2016

VERDUGO PARK GLENDALE 1621 Canada Blvd., Glendale, CA, 91206 Starting at 11:00 am

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ - ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԵՎ ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ - ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ - ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ

Live Music - Dancing - Art Work Exhibition - Kids Games - Armenian Food

GENERAL SPONSOR
INNOVATIVE Designs Manufacturing, Inc.
By TED & NORA KOROGHLIAN

To reserve your vendor booth please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար Հեռաձայնեցե՛ք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938

ՀԱՄԱՏԱՐԻՍ ԶԱԲԱԿԸ, ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆԸ Տէր Վրթանէս Ա. Քհնյ. Գալայճեանի Վախճանումին առթիւ

«Երեւի ամէն մարդ թանկ մէկին պիտի կորցնի, որ յետոյ ամբողջ կեանքում որոնի, քանի ապրում է...»

Վարդգէս Պետրոսեան

«Թանկ» բառը չեմ գիտեր թէ իսկապէս պիտի կարենա՞յ պարփակել մէկ անհատի մէջ ամբողջութեամբ բոլոր այն առաքելի ծառայութիւնները, որ Արժ. Տ. Վրթանէս Ա. Քհնյ. Գալայճեանը կը մարմնաւորէր իր ողջութեան: Հոգեւորական մը՝ որ իր ֆիզիքական երկրաչին գոյութիւնը յանձնեց Նիւ Ճըրզիի Ճօրճ Ուաշինկթըն Յիշատակի Այգիին՝ միանալու համար երկնաչին կապոյտին մէջ թեւածող իր հօր՝ Տիրահայր Գէորգին հոգիին:



Սիրանիշական ընտանիքէն հեռու մնալով քահանայ եղբայրս այս քան մեծ թուով ընտանիքի մը գուրգուրանքին եւ յարգանքին արժանի դարձած էր: Աշակերտներ, գործակիցներ, ազգայիններ, հոգեւոր հայրեր, նպաստընկալներ բոլորն ալ ըսելիք ունէին, թէ ինչպէս եւ ինչպայմաններու տակ Տէր Վրթանէսը իրենց կեանքէն ներս ներդրում մը ունեցած էր:

Տէր Հօր Մայրաքաղաք Ուաշինկթընի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հովուական շրջանին կարճ ժամանակի մէջ եկեղեցիէն ներս տեղի ունեցած բարելաւումները կը թուէին, Հ.Ե.Կ.-ACVOA-ի ձեռնարկներէն «Հայ Քլայ» երիտասարդացի, «Արարատ» երէցներու խումբի կազմութեան մինչեւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ կողքին Կիրակնօրեայ եւ Հայ Դպրոցներուն նոր դասարաններով օժտուիլը: Իսկ Տէր Վրթանէսին հովուական օրերուն ծխական խորհուրդի ատենապետը կը թելադրէր - Ի պահանջել հարկին Տէր Հօր օգնութեան կարիքը ունեցող ծխականին, գաջն փնտել եւ գտնել - «եկեղեցիէն ու տունէն ետք, հիւանդանոցներէն, գործի ապահովութեան եւ կամ «Իմիկրէյշըն» զբոսանակներէն եւ կամ՝ շրջանի դատարաններէն - ուր Տէր Հօր հոգատար գործունէութիւնը իր ծխականներուն համար կը տարածուէր իրերէ մխիթարիչ, խորհրդաւոր:

Օգոստոս Հինգէն ի վեր իրար յաջորդող ցաւակցական խօսքերն ու վշտակից գրութիւնները բոլորն ալ եկան ընդձեռն մեր եղբօր արժանիքները թէ ան հաւասարապէս եւ հայրենասէր էր եւ եկեղեցասէր, հայ լեզուի ջատագովն էր եւ ընտանիքը սիրող զաւակ:

Գրեթէ անհաւատալի կը թուի թէ արդէն կէս դարէն աւելի - 63 տարի անցած է այն օրէն՝ երբ առաջին անգամ տասներեք տարեկան Ջաւէն եղբայրս յանձնուեցաւ Դերենիկ Սրբազանին, բարձրագոյն ուսում ստանալու երազով դառնար Անթիլիաս Դպրեվանքի սան:

Երբ շրջանաւարտ ըլլալէն ետք տուն դարձաւ եղբայրս հօրս յայտնեց թէ որոշած է ազգին ծառայել հոգեւորական դառնալով: Հայրս մէկ պատասխան ունէր տալիք - «Ըրէ՛՛ այնպէս որ յետոյ չըսես թէ հայրս ապագայի իմ ծրագրերներուն արգելք եղաւ»:

Յեղասպանութենէն հազիւ փրկուած հօրս համար, մանաւանդ՝ այդ օրերուն անդրանիկ մասնէ զաւակը նիւթական մեծ ապահովութիւն կը նշանակէր հ'ոն Հալէպի Ազգի մէջ: Անգիր օրէնք էր, կամ՝ սովորութիւն, որ ընտանիքին անդրանիկ զաւակը նախակրթարան աւարտելէ ետք անմիջապէս «ազուր» արհեստ մը սորվելով շուտ եւ շատ դրամ շահելու (չինելու) ձեւը գտնէր: Հինգ զաւակի տէր հայս այս բոլորը զգալով հանդերձ անձնասէր չեղաւ: Իր ընտանիքին յուսատու այդ ապահովութիւնը, իր անդրանիկ զաւակը կը զիջէր Հայ ժողովուրդին եւ եկեղեցիին:

Անկէ ետք մենք-քոյր եղբայրներով տարուէ տարի զգացինք թէ մեր երէց եղբայրը մեզ հարստացուց իր հոգեւոր ազդեցութեամբ, իր կեանքին օրինակով եւ իր երկու քոյրերուն եւ երկու եղբայրներուն հանդէպ ցուցաբերած հոգատարութեամբ: Բնականաբար, ազբիւրը այդ հոգատարութեան կը բխէր ծնողքէս- հանգուցեալ հօրս՝ Գէորգին եւ 93-ամեայ մօրս՝ Տիրամայր Զապէլ Գալայճեանէն:

Հիմա ես ալ որպէս մայր եւ մեծ մայր կը զգամ թէ Ի՞նչ ըսել է տասներեք տարեկան անդրանիկ զաւակը ընտանիքէն հեռու ուրիշ երկիր, գիշերօթիկ դրկել, յանուն՝ բարձրագոյն կրթութեան, հոգեւոր եւ մտային զարգացման, այն ալ տասներեք տարեկանին եւ ... այսօրուայ հաղորդակցութեան կապերու չգոյութեան:

Ուրբաթ՝ Օգոստոս 12-ին Տան կարգի արարողութիւնը Տէր Վրթանէսին 77-րդ տարեդարձը կը նշէր: Նիւ Ճըրջիի Ս. Ղեւոնդեանց եկեղեցին լեցնող սգակիրները՝ երկու օրերուն ալ - եկան փաստելու, որ

դական ու թարգման, իր կոչումին եւ պաշտօնին հաւատարիմ անձը, հաւատքով եւ հայրենասիրութեամբ ծառայող հոգեւորականը, միշտ ալ իրեն գործակից ունենալով նոյնքան հաւատացեալ եւ ծառայասէր երէցկիւն Անահիտը»:

Այո, Գալայճեան Տիրահայր Գէորգին եւ Տիրամայր Զապէլին անդրանիկ որդին տասներեք տարեկանէն սկսեալ (1953) Հայց. Եկեղեցւոյ եւ իր ժողովուրդին նուիրեալ զաւակն էր: Աշխարհագրական անուններով լեցուն լայնածաւալ քարտէս մըն է որ գծած է ան իր կեանքին շրջանին, ամենուրեք իր հոգիէն ու սէրէն բաժին հանելով բոլոր անոնց որ իր օգնութիւնը փնտրած են այս կամ այն պատճառով: Իր անմոռանալի յիշատակները տարածուած են - Լիբանանի մէջ՝ Անթիլիաս, Պէյթ Մէրի, Պիքֆաիա, Յորդանանի մէջ՝ Երուսաղէմ, Ամման, Հրեշտակապետաց, Թարգմանչաց Վարժարան, Սիոն Ամապիւր, Սուրիոյ մէջ՝ Հալէպ-Ս. Վարդան, Կիլիկեան Վարժարան, Միացեալ Նահանգներու մէջ՝ Ուոքիլըն, Էլյէրոն, Եոնեքըն Սիթի, Ճամբար Նուպար, Ճամբար Վարդան, եւ ապա վերջին չորս տասնամեակներու ընթացքին Մայրաքաղաք Ուաշինկթընի մէջ հովուական ծառայութիւններու, ինչպէս նաեւ ազգային, բարեսիրական գործունէութիւններու շարանով մը՝ Հայրենիքէն ներս:

Ուաշինկթընի ծխականներէն Տօքթ. Գումգուզումեանին վկայակոչումը շատ բան կ'ըսէր Տէր Վրթանէսին անձին ու նուիրումին հանդէպ հանդիսութեան մը ընթացքին - Տէր Վրթանէսը - ըսաւ Գումգուզումեանը - «հաւատալով թէ այսօրուայ պատանին վաղուայ առաջնորդն է Հայ եկեղեցիին ու կազմակերպութիւններէն ներս, գանազան հետաքրքրական ձեռնարկներով, պաշտօնի հարկադրանքէն անդին մինչեւ իսկ անհատական զոհողութիւններով, փաստեց թէ տարիքային տարբերութիւն բնաւ գոյութիւն չունենար եթէ հասկացողութեամբ մօտեցում ըլլայ», «անմեզի համար, շարունակեց Գումգուզումեան, իրա՛ւ ուսուցիչն էր ամէն բանէ առաջ, որ մեզի ուսուցած է

ո՛չ այնքան քարոզչական խօսքերով այլ՝ իր անձին օրինակովը - անմեզի սորվեցուց ինչպէս ներել գիտնալ, ու հաւատալ՝ նոյնիսկ շարունակական, անվերջ թուացող յուսախաբութիւններէ ետք իսկ»:

Այո՛, Տէր Վրթանէսն ալ իր հովուական գանազան շրջաններուն իր կարգին շատ մը յուսախաբութիւններ ունեցած էր: Սակայն անոնք բնաւ չկրցան արգելք հանդիսանալ իր առաքելութենէն շեղելու եւ իր հաւատացեալ ժողովուրդէն հեռանալու:

Վերջին օծումի եւ թաղման արարողութիւններուն կը նախագահէր Առաջնորդ Սրբազան հայր՝ Բարձ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանը: Սրբազան հայրը իր դամբանականին մէջ ընդգծեց Տէր հօր բազմազան բարոյական եւ մտաւորական արժանիքները, ի մասնաւորի Տէր Հօր երկկեզու (Անգլ. եւ Հայերէն) բարձր ոճով արտայայտուելու եւ գրելու շնորհքը:


Վկայութիւններու շարանը երկար է, որ պիտի ամփոփուի Տէր Հօր Քառասունքին նուիրուած գրքոյկին մէջ: Ամէնէն կարեւորը հոգիներէն ներս թափանցող իր ցուցաբերած գուրգուրանքն ու հաւատքն էր իր ժողովուրդին հանդէպ:

Ստորեւ անոնցմէ մի քանին - Լուս Անճելոսէն հոգեւոր հայր՝ Տ. Ղեւոնդ Քահանան կը գրէր - «Կան Մարդիկ, որ աշխարհ գալով իրենց հետ լոյս եւ Չեմութիւն կը բերեն: Անոնք կ'ապրին իրենց կեանքը սերմանելով բարին, գեղեցիկն ու ճշմարիտը: Ապա Անեղին հրամանով հրաժեշտ կու տան իրենց երկրաւոր կեանքին, լուսաւոր յուշ եւ անսփոփ կարօտ թողնելով բոլոր անոնց սրտերուն մէջ, որոնք բախտը ունեցած են գինք ճանչնալու, տեսնելու եւ կամ լսելու: Ահա այդպիսին էր մեր բոլորին սիրելի եւ բոլորիս յարգանքը վայելող հոգելոյս Տէր Վրթանէս Ա. Քհնյ. Գալայճեանը: Ան եղաւ յոյսը, լոյսը եւ ճշգրիտ ուղեցուցը ոչ միայն իր հարազատներուն, այլեւ իր խնամքին յանձնուած հաւատաւոր հօտին»:

Իսկ Ֆիլատելֆիայէն Տ. Ներսէս Ա. Քահանան ցաւակցական

Շար.ը էջ 19

2016-Ի ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ



ՊԵՊՕ ՍԻՍՈՆԵԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

ՊԵՊՕ ՍԻՍՈՆԵԱՆ բանաստեղծի, գրականագետի, մշակութաբանի, մանկավարժի եւ հանրային գործիչի խոհերը կեանքի, ժամանակի, հայրենիքի եւ աշխարհի մասին:



ՆԱԳԵՒԻ ԷՄԻՆԱՆ-ՆԱԿԱՍՏՆԱՆ
ՀԱՅ ՍՎԱՌՏԻՆ
ՈՒՂԵՅՈՅՑՑԸ

Սկստական կրթութեան անհրաժեշտութիւնը հայ նորահաս սերունդներու մէջ արմատաւորելու լիարժէք մտքորոյ յատկութիւնները:

ԿԸ ՎԱՃԱՐՈՒԻՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐԱՏՈՒՆՆԵՐԸ

ԱՊՐԷԼ ԳՐԱՏՈՒՆ
ABRIL BOOKSTORE
415 East Broadway • Glendale, CA 91205
abrillbook.com 818 • 243 • 4112

ՊԵՐՃ ԳՐԱՏՈՒՆ
BERJ BOOKSTORE
422 South Central Avenue • Glendale, CA 91204
818 • 244 • 3830

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆԸ ՎԱՔՐՇԼՐԻ ՄԷՋ



ԼՈՐԱ ՊԱՅԹԱՐ ԶԱՓԱՐ (Վաքրֆլըն)

Ամէն տարուան Օգոստոս 15-ին Աստուածածնայ Վերափոխման Տօնին հետ մէկտեղ, մեր ժողովուրդը կը նշէ խաղողի օրհնութեան եւ բերքառատութեան տօնը: Քրիստոնէութեան մէջ խաղողը յատուկ տեղ ունի եւ ան կը խորհրդանշէ Քրիստոսին խօսքը. «Ես եմ ճշմարիտ որթը եւ իմ հայրս մշակն է: Ես որթն եմ ու դուք ճիւղերն էք»:

Այս պատճառով քրիստոնէաներուն համար խաղողի օրհնութեան տօնը, կամ ինչպէս ժողովուրդը կ'ըսէ խաղողի տօնը ուրախութեան եւ խնդութեան օր է, ուր շատ մը հաւատացեալներ այդ օրը իրենց առաջին խաղողները կ'ուտեն:

Աստուածածնայ Վերափոխման Տօնը Վաքրֆլըն աւելի մեծ խանդավառութեամբ եւ ուրախ մթնոլորտի մէջ կը տօնախմբէ, ասոր պատճառը կը վերագրուի, 1997-ին Մեսրոպ Բ. Պատրիարքի ջանքերով վերականգնուած Վաքրֆլըի եկեղեցիին Աստուածածնայ անունով կոչուած ըլլալուն եւ աւանդութեան կառչած մնալու ամուր կամքին:

Հանդիսութիւնները կը սկսին Շաբաթ իրիկունը եկեղեցիի բակին մէջ եօթը պղինձէ կաթսաներու գետեղումով, որուն շուրջ տարբեր շրջաններէն այցելութեան եկած Աստուածածնայ հիւրերն ու ուխտաւորները թմբուկի եւ գուռնայի ուրախ երաժշտութեան ներքոյ մինչեւ առտու կը պատրաստեն աւանդական հարիսան: Այս տարուան հիւրերու շարքին էին, Օրթաքէօյի հայկական եկեղեցւոյ վարչութեան ատենապետ՝ Իսկենտէր Շահինկէօզը եւ վարչութեան անդամները՝ Անգարայի Հայ Կաթողիկէ համայնքէն 20 հոգի, «Արաս» հրատարակչատան հիմնադիրներ Եղուարդ եւ Փայլին Թովմասեանները, ինչպէս նաեւ Պետրոս Իւշիւնմէզ, Պոլսոյ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ «Ասողիկ» երգչախումբը: Վաքրֆլըի շինարարութեան վաստակաշատ մասնակիցներէն Միհրան Ուլիկեանը եւ ճարտարապետ Սասնուհի Մուշեանը, Հալէպէն Թուրքիա գաղթած հայ ընտանիքներ եւ հիւր մենակատար երգիչ Պարթեւը:

Հիւրերը դիմաւորուեցան Վաքրֆլըի վարչութեան կողմէ: Այս տարուան տօնին անակնկալը եղաւ Պարթեւը: Ամէն տարի մուսալեռցի արուեստագէտներուն մասնակցութեամբ տեղի ունեցող խնճոյքին

անցեալ տարի մասնակցած էին՝ Արի Հերկելը եւ «Ոմանք»-ը: Այս տարի անոնց փոխարինեց Պարթեւը, որ իր ամբողջութեամբ հայկական երգացանկով խանդավառեց հիւրերն ու ներկաները:

Մինչեւ տօնակատարութիւն հանդիպում հիւրերուն հետ ըստ աւանդութեան, Վաքրֆլըի մէջ տօնը կը սկսի Ուրբաթ օրը Պոլիսէն ժամանած հիւրերուն դիմաւորումով, որոնց համար եկեղեցւոյ պարտէզին մէջ սեղաններ կը փռուին, ուր հիւրերը կը ճաշակեն յատուկ իրենց համար պատրաստուած Վաքրֆլըի խորհրդանշիչ եղող «Պողմա» օղին եւ դափնիի ճիւղերուն վրայ եփած խոզի միսը:

Միսակ Հերկելի նուագակցութեամբ գիւղի երիտասարդներէն բաղկացած երգչախումբը մինչեւ ուշ ժամեր ուրախ մթնոլորտի մէջ պահեց ներկաները, որոնք միասնաբար երգեցին «Գետաշէն», «Հագար նազով եար» եւ «Տապքէ» պարեցին «Հէլէ հէլէ նինօ» երգի ու երաժշտութեան ընկերակցութեամբ: «Առանց թմբուկ զարնելու հարիսան չ'եփիր» Շաբաթ օրը տօնին ամենակարեւոր օրն է: 1915-ին երբ մուսալեռցիները լեռ կը բարձրանան, իրենց հետ կը տանին ցորենով եփած եւ միսով պատրաստուած հարիսան, այդ օրուընէ սկսեալ այստեղ այս ուտեստը նուիրած են իրենց փրկող լեռան եւ ամէն տարի Աստուածածնայ օրը հարիսան կ'եփուի եւ կը բաժնուի բոլորին:

Գիւղին մէջ ասացուածք մը կայ որ կ'ըսէ. «Առանց թմբուկ զարնելու հարիսան չ'եփիր»: Թաղականութեան ատենապետ Ճէմ Չափարի հետ մեր զրոյցի ժամանակ, ան ըսաւ. «Եօթը պղինձէ կաթսաները կը խորհրդանշեն եօթը գիւղեր, իսկ հարիսան որպէս մատաղ նուիրուած է Մուսա լեռան, որ փրկեց մեզ, եթէ մեր «Տապքէ»-ն չի պարենք, թմբուկ չի զարնենք հարիսան չ'եփիր, մեր այս հանդիսութիւնը միեւնոյն ատեն հերոսամարտի ոգեկոչումն է, այս բոլորը միասին անբաժան տարրերն են մեր խնճոյքին»:

Թմբուկի եւ գուռնայի ուրախ երգերու ընկերակցութեամբ կաթսաները կը պատրաստուին, միսերը կը բաժնուին կաթսաներուն մէջ, ցորենը կը ցրուի եւ ճիշդ ժամը 12:00-ին եւ միասնաբար կրակը կը վառեն իւրաքանչիւրը

ԽՈՆԱՐՅՈՒՄ ԱՇՈՒՂ ԶԻԲԱՆՈՒ ՇԻՐԻՄԻՆ



2016 Ձթուականի Օգոստոսի 26-ին, Թբիլիսիի Հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթէոնում հաւաքուել էին Վրաստանում ՀՀ դեսպանութեան դիւանագէտներ, Զաւախքի աջակցութեան հիմնադրամի դեկավարները, Վիրահայոց թեմի հոգեւոր դասը, համայնքային կառույցների ներկայացուցիչները, Թբիլիսահայ մտաւորականներ:

Հայ աշուղական արուեստի կարկառուն դէմք աշուղ Զիւանու (Սերոբ Ստեփանի Լեւոնեան) ծննդեան 170-ամեակի տօնակատարութիւնը մեկնարկեց մեծ գուսանի շիրիմին ծաղիկների խոնարհումով եւ հոգեհանգստեան արարողութեամբ:

Բացելով յիշատակի միջոցառումը, Վիրահայոց թեմի մշակույթի բաժնի տնօրէն, «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Լեւոն Զիւղիլեանը ներկաներին հրաւիրեց մասնակցելու Օգոստոսի 27-ին աշուղ Զիւանու ծննդավայր Կարծախ գիւղում կայանալիք Զիւանու աւանդական երգարուեստի մեծարման միջոցառմանը, որը կը նշանաւորուի աշուղական արուեստի մրցույթով եւ գուսանի տուն-թանգարանի հանդիսաւոր բացմամբ:

Աշուղ Զիւանու խոհա-փիլիսոփայական եւ ժողովրդական ստեղծագործութեան մեծարման եւ խոնարհումի խօսք ասացին բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջեանը, ԶԱՀ-ի նախագահ Սօս Սահակեանը, գործադիր տնօրէն Աշոտ Յակոբեանը, Թբիլիսիի Պետրոս Աղամեանի անուան «Հայպետդրամայի» թատրոնի գեղարուեստական ղեկավար Արմէն Բա-



յանդուրեանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բալբուրդեանը: Մեծ գուսանի ծոռուհի՝ Արաքսիա դասեր թողը՝ Գրետա Նիժարաձէն, երախտագիտութեան խօսքեր ուղղեց Զաւախքի աջակցութեան հիմնադրամին եւ Ախալքալաքի մուլտիցիպալիտետին, քաղաքապետարանի, ում նախաձեռնութեամբ եւ աջակցութեամբ բացուում է իր մեծ պապի տուն-թանգարանը նրա ծննդավայրում:

Յուզիչ էր ներկաների կողմից Զիւանու տապանաքարի ցորումը Կարծախ գիւղից բերուած հող ու ջրով: Միջոցառման աւարտին հաւաքուածներին օրհնութեան խօսք չղեց Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տէր Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանը:

Վիրահայոց թեմի առաջնորդի եւ հոգեւոր դասի մասնակցութեամբ կատարուեց հոգեհանգստեան արարողութիւն, որն ուղեկցուեց Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու երգչախմբի կատարումներով:

ԱՐՑԱԽԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՎԱԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԻ ՇՆՈՐՅԱՆԴԵՍ ԻՏԱԼԻԱՅԻ ՌԻՄԻՆԻ ԲԱՂԱՔՈՒՄ



Օգոստոսի 23-ին Իտալիայի Ռիմինի քաղաքի «Neri Conai» դահլիճում կայացաւ իտալացի լրագրող Զիւան Միկալեսինի «Լեւոնային Ղարաբաղ. պատերազմի վե-

րադարձը» վաւերագրական ֆիլմի շնորհանդէսը: Միջոցառումը կազմակերպել էր «Խաղաղութեան եւ

3 ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ, ՈՐՈՆՔ ԶԵՐ ԱՌԱՓՕՏԸ ԲԱՐԻ ԿԸ ԴԱՐՁՆԵՆ

1. «Աստուած կու տայ անոր, որ շուտ կ'արթնանայ»։ Սկիզբի համար պետք է սորվիլ կանուխ արթննալ: Կը թուի, թէ դժուար է, բայց կանուխ արթննալը կ'երաշխաւորէ առաւօտեան հրաշալի առօրեայ թիւնը, ի հարկէ ժամանակին քնանալու պայմանով: Արթննալու խոչընդոտ ժամանակ կը համարուի առաւօտեան 6-ը եւ աւելի շուտ: Իգուր չէ, որ մեր նախնիները կ'արթննային մայրամուտի հետ եւ՝ առանց որեւէ զարթուցիչի: Աւելի ուշ արթննալը յղի է հոգեյուզական վիճակի խանգարումով, որոշ հիւանդութիւններու սրումով, դիմադրողականութեան նուազումով, գլխացաւերով, մեծ ախորժակով եւ նոյնիսկ ճնշախտով:

Փորձեցէք գոնէ մէկ շաբաթ քնանալ 22-23:00-էն ոչ ուշ եւ արթննալ 6:00-ին: Հետեւեցէք ձեր ինքնազգացողութեան եւ տրամադրութեան: Վստահ եղէք, որ դուք գրեթէ անմիջապէս դրական պիտի զգաք: Եւ այն պատուակը, թէ դուք «բու» էք, արդարացում չունի: Մենք բոլորս ի բնէ «արտոյտներ» ենք, ատիկա մեր մէջ դրուած է բնութենէն, ուր մայրամուտին հետ բոլոր կենդանի արարածները կը քնանան, իսկ կ'արթննան արեւածագին հետ: Մեզմէ շատերուն «բու» դարձուցած է քաղաքակրթութիւնը, կեանքի ինքնազգացողութիւնը եւ յաւաքացած ճարտարագիտութիւններու դարձը, բայց զայն կարելի է շտկել դիւրութեամբ:

2. «Պատրաստուի՛ր մարմնամարզութեան»։ Սովորութիւն դարձնելով կանուխ արթննալը, մենք քանի մը վայրկեան ազատ ժամանակ պիտի ունենանք, որոնք կարելի է անցնել՝ կատարելով առա-

ւօտեան վարժութիւններու համալիր: Բայց մարմնամարզութիւնը մի խառնէք սփորթով լիարժէքօրէն զբաղելուն հետ: Մարմնամարզութիւնը ուղղուած է ներքին օրկաններու աշխատանքի աշխուժացման, արեան շրջանառութեան բարելաման, կապերու եւ յօդերու մարզումին, որ պիտի օգնէ օրուան ընթացքին խոսափելու սովորական կենցաղային վնասուած քնեւրէն: Այդ պատճառով ձեզի համար առանձնացուցէք 10-15 վայրկեան, հանգստացուցէք մկաններու հիմնական խումբերը, կատարեցէք քանի մը պարզ վարժութիւն: Իտալական առաւօտեան մարմնամարզութիւնը, զայն բնութեան գիրկին մէջ կատարելն է՝ թոքերը թթուածինով հարստացնելով: Բայց սովորական բնակարանի պայմաններուն մէջ հնարաւոր է պարզապէս օդափոխել սենեակը: Կանոնաւոր կերպով մարմնամարզութիւն կատարեցէք ամէն օր, ներառեալ հանգստեան օրերուն եւ մի մոռնաք անկէ առաջ կիտրոնի շերտիկով 1-2 բաժակ տաք ջուր խմել:

3. Տաք եւ պաղ ցնցուղներ։ Այո, առաւօտեան ծէսերը պետք է աւարտել տաք եւ պաղ ցնցուղներով: Տաք եւ պաղ ցնցուղներուն հերթագայութիւնը կ'աշխուժացնէ արեան շրջանառութիւնը, կ'աշխուժացնէ նիւթափոխանակութիւնը, կը բարելաւէ դիմադրողականութիւնը եւ կը մարզէ մարմինը ընդհանուր առմամբ: Մէկ խօսքով, անիկա առօրեայութեամբ կը լիցքաւորէ ամբողջ օրուան համար: Առաւօտները այս ոչ բարդ սովորութիւնները իրականացնելով՝ պիտի նկատէք, որ «առաւօտը բարի չէ» ասոյթը հաստատ ձեր մասին չէ:

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ՝ ՍԻՐՈՅ ԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

1. Զկայ երկրորդ կէս հասկացութիւն։ Մեր կեանքի ճանապարհին մենք կը հանդիպինք շատ տարբեր մարդոց, որոնք կը լեցնեն մեր կեանքը եւ իմաստ կու տան անոր: Երբեմն այդ մարդիկ մեր հետ կը մնան ամբողջ կեանքի ընթացքին, երբեմն՝ ընդամենը քանի մը օր, ամիս կամ տարի: Ամենաաքանչեւին այն է, որ անոնցմէ իւրաքանչիւրը մեզի որեւէ բան կը սորվեցնէ կեանքի եւ իր մասին: Եւ նոյնիսկ ամենացաւոտ բաժանումները հնարաւորութիւն են հասկնալու, թէ մենք ով ենք կամ ալ ով չենք իրականութեան մէջ:

2. Միշտ կայ ոեւէ մէկը, որ մեզ կը համապատասխանէ։ Կարեւոր չէ, թէ ինքնագարգացման որ փուլին ենք, մենք կրնանք գրաւել զայն, որուն մենք արժանի ենք: Ատիկա տեղի կ'ունենայ այն ժամանակ, երբ մենք կը հասկնանք, որ ինքնաբաւ ենք առանց որեւէ կէսի: Այդ ատեն մենք կը հանդիպինք նոյնպիսի ինքնաբաւ մարդու:

3. Սէրը պայմաններ չի ճանչնար։ Սիրել կրնայ մեզմէ իւրաքանչիւրը: Եթէ կը զգանք, որ պետք է փոխուինք, որ մեզ սիրեն, կը նշանակէ, մենք սխալ մարդու հետ ենք: Կամ ալ ինդիքը մենք ենք, մեր ցած ինքնագնահատակա-

նը, իբր մենք արժանի չենք այդ մարդուն: Ան, զոր կը գրաւենք մենք, մեր ինքնարնկալման արտացոլացումն է: Ուրեմն պետք է նախ մենք մեզ սիրենք:

4. Մենք կրնանք շատերը սիրել։ Սէրը չի վերջանար, եթէ մենք անկէ չափազանց շատ տուած ենք մէկ մարդու: Սէրը կը անուի սիրով: Որքան շատ մենք կու տանք, այնքան շատ կ'ունենանք անկէ: Մենք կրնանք անսահմանօրէն սիրել շատ մարդիկ, տարբեր պատճառներով եւ շատ բնական է մարդոց ըսել այդ մասին:

5. Ամէն ինչ քեզմէ կախեալ չէ։ Եթէ դուն ազնիւ ես, քնքուշ, բարի անոր հանդէպ, որուն կը սիրես, բայց ան կը կոտրէ սիրտդ, ատիկա չի նշանակել, թէ դուն որեւէ բան սխալ ւրած ես: Ամէնէն յաճախ ան է, որ պատրաստ չէ սիրոյ նման մակարդակի: Եւ իւրաքանչիւրը իր սրտին մէջ ունի իր վերքերը, որոնք անհրաժեշտ է բուժել: Բայց ամէն մէկը չէ, որ պատրաստ է նման բուժման:

6. Յաւը յաւերժ չէ։ Երբ մեզի ցաւ կը պատճառեն, պետք է ընդունիլ զայն եւ վերապրիլ: Այդպէս միշտ չ'ըլլար, բայց կարեւոր է ընդունիլ զայն, որպէսզի սկսիք վերականգնման գործընթացը եւ առաջ շարժիք:

ՉՈՅԳԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿԸ ԿԻՍԵՆ ՏՆԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԱԲԵԼԻ ԵՐՁԱՆԻԿ ԵՆ

Կ'ըսեն, որ իրական տղամարդիկ պէտք է երթան աշխատանքի եւ ընտանիք պահեն: Իսկ անոնց գեղեցիկ կէսերը այդ ժամանակ պէտք է մնան տունը, խնամեն փոքրիկները եւ ընտանեկան յարմարաւէտութիւն ստեղծեն: Սակայն, եթէ ձեր ժամացոյցը քանի մը տասնեակ տարիներով ետ չէ մնացած, ուրեմն դուք պիտի ըսէք, որ դերերու այդպիսի տեղաբաշխումը շատոնց արդէն արդիական չէ:

Այժմ աղջիկները տղամարդոցմէ ոչ պակաս կը հետեւին իրենց սպայրէզին եւ ամէն օր աշխատանքի կ'երթան: Վերադառնալով, սակայն, անոնք ամբողջութեամբ կը լծուին տնային գործերուն՝ մաքրութիւն ընել, ընթրիք պատրաստել, ամանները լուալ:

Հաւանաբար անոնց տղամարդիկը ուղղակի տեղեակ չեն այն հետազօտութիւններուն մասին, որոնք սպացուցած են, որ տնային պարտականութիւններուն բաժանումը սիրահարներուն կեանքը աւելի երջանիկ կը դարձնէ:

Առաջին այսպիսի հետազօտութիւնը կատարած մասնագէտը ուսումնասիրած է բազմաթիւ գոյգեր եւ եկած այն եզրակացութեան, որ կենցաղային պարտականութիւններուն բաժանումը յարաբերութիւններու ներդաշնակութեան գրաւականն է: Քիչերն են, որ կը

սիրեն տնային գործերով զբաղիլ: Սա կայն, եթէ տղամարդը կ'օգնէ իր տիկնոջ, վերջինս կը զգայ, որ զինք կը գնահատեն եւ աւելի քիչ կը վրդովի:

Բացի այդ, պարտականութիւններու հաւասար բաժանման պարագային՝ սիրահարները աւելի ուշ կը յոգնին, բան մը, որ կը նշանակէ, որ անոնց ուժերը պիտի բաւեն մինչեւ ուշ գիշեր: Այս հասարակ գաղտնիքը կրնայ փրկել զանոնք, որոնք նոր կը սկսին ընտանեկան կեանքը: Երկու տարիէն ոչ աւելի ամուսնացած 220 գոյգերու հարցումը ցոյց տուած է, որ պարտականութիւններու հաւասար բաժանումը կ'օգնէ անոնց վերապրելու ընտանեկան առաջին խնդիրները եւ հասնելու փոխմբումնան: Այսպիսի փոքր բացայայտումները ցոյց կու տան, թէ որ քան կարեւոր է ընտանեկան կեանքին մէջ կիսել ոչ միայն երջանիկ պահերը, այլ նաեւ ձանձրալի ամէնօրեայ գործերը:

Եւ այսպէս, եթէ կ'երագէք ամուր եւ առողջ յարաբերութիւններ ունենալ, մի մոռնաք կիսել կենցաղային գործերը: Տղամարդիկ ուղղակի պէտք է աւելի յաճախ առաջարկեն իրենց օգնութիւնը եւ երջանկութիւնը երկար սպասեցնել չի տար:

ՅԱԶՈՂԱԿ ԿՆՈՋ 7 ՈՍԿԷ ԿԱՆՈՆ

-Սորվիր երջանկութիւն ճառագել: Երջանկութիւն ճառագող կինը ուժեղ մագնիս է տղամարդոց համար: Ապացուցուած է, որ եթէ երջանիկ ժպիտ «նկարես», կը մտնես անհրաժեշտ վիճակի մէջ, իսկ յետոյ կու գայ իրական երջանկութիւնը:

-Գիշեր-ցերեկ մի մտածեր այն մասին, թէ դուն որքան պէտք է բարձրացնես ինքնագնահատականդ: Չափէն մեծ ցանկութիւնը երբեմն խոչընդոտ կը դառնայ սեփական ինքնաիրացման ճանապարհին: Ուղղակի ապրիր եւ հաւատա՛, որ կը հասնիս այն ամէնուն, զոր կը փափաքիս:

-Կորչի կատարելութեան աւելորդ ձգտումը: Արտօնէ դուն քեզի անկատար ըլլալ: Նոյնիսկ եթէ որեւէ բան ուրիշներէն վատ կ'ընես, ատոր իրաւունքը ունիս, դուն պարտաւոր չես ամէն ինչի մէջ իտէալական ըլլալու:

ՈՒՐՑՈՎ ԹԵՅԻՆ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ուրցը իւրաքանչեւ բոյս է, որ մարդկութեան յայտնի է հին ժամանակներէն: Անիկա ունի հաճելի համ եւ բուժիչ յատկանիշներ:

Ուրցը ունի մանրէասպան, ցաւազրկող, պրոնիտները լայնցնող յատկանիշներ: Անիկա արագ կը վերականգնէ վնասուած քները, մարմինէն դուրս կը հանէ որդերը: Ուրցը նաեւ կը կարգաւորէ նիւթափոխանակութիւնը, որ չափազանց կարեւոր է անոնց համար, որոնք կը հետեւին իրենց կշիռներին:

Ուրցի չորցած ծաղիկներով թէյը խորհուրդ կը տրուի անոնց, որոնք կը տառապին անքնութեան: Ուրցով թէյը նաեւ կը հանգստացնէ ռոմաթիզմի եւ արթնիտի ժամանակ յաւաքացած ցաւերը:

-Մոռցիր վախերու մասին: Պատկերացուր, թէ տեղի ունեցած է այն, ինչէն դուն այնքան կը վախնայիր՝ ամենավատը: Նախապէս տարբերակներ մտածէ, թէ ինչպէս վարուիս այդ պարագային: Եւ յիշէ, որ ինքնագնահատականը բարձրացնելու համար օգտակար է որեւէ, նոյնիսկ բացասական փորձը:

-Գործերը մի յետաձգեր: Որքան երկար կը պատրաստուիս որեւէ բան սկսելու, այնքան անորոշ կը թուին դժուարութիւնները:

-Մի վախնար նոր բան սորվելէն եւ զայն փորձելէն: Դուն չես գիտեր, թէ երբ ատիկա քեզի ծառայութիւն պիտի մատուցանէ:

-Հետեւիր արտաքինիդ: Մարգասարհ, լողաւազան, դիմաշարդար, վարսաշարդար: Ոչինչ այնքան չի բարձրացնէր ինքնագնահատականը, որքան նոր կերպարը, նոր սանտրուածքը:

Այս բոյսը կ'օգտա ործուի թոքաչին շարք մը հիւանդութիւններու պարագային, օրինակ՝ ազմա, պրոնիտիտ եւ այլն:

Ուրցով ըմպելիներ Բառորդ գաւաթ ջուրին աւելցուցէք 1 թ/դ չորցուած ուրց: Եռացուցէք եւ ձգեցէք հանգչի 10 վայրկեան: Լեցուցէք գաւաթի մէջ, աւելցուցէք եռացացած ջուր եւ 5-7 վայրկեան եւս ձգեցէք մնայ, ապա՝ քամեցէք ու վայելեցէք համեղ թէյը:

Ուրցը, սակայն, խորհուրդ չի տրուիր կաթիլի, ստամոքսի խոց, վահանագեղձի խնդիր, շաքարախտ ունեցող մարդոց: Յղիներուն եւ փոքրիկներուն խորհուրդ կը տրուի հարցնել բժիշկի կարծիքը:

ԽՈՒՃԱՊԻ ՅԱՆԳԵՐԳՆԵՐԵՆ ԶԱՏ

Շարունակուած էջ 6-էն

Ղարաբաղի հարցով կամ գիշտմաներու կ'երթանք, կամ ալ սկիզբ կ'առնէ վտանգաւոր պատերազմ մը»:

Յարդ խօսուած եւ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սէրկէյ Լավրովին վերագրուած նոր համաձայնութիւններու թուղթը մէջտեղ չկայ: Ու գաղտնիք ալ չէ, որ Մոսկուայի հովանաւորութեամբ ընթացող բանակցութիւններու այս փուլը, եթէ Լավրովի առաջարկած հինգ կամ եօթ շրջաններու Ազրպէյճանին յանձնուելի է Հայաստանի ու Արցախի համար այդ մէկը ինքնասպանութիւն ըլլալու բոլոր պայմանները կը լրացնէ: Կը բաւէ հասկնալ Ատրպէյճանի ռազմատենչ եւ հայաջինջ պոռչտուքներուն խորքային իմաստը ընկալելու համար, որ շրջաններու յանձնուածով եւ ատոր փոխարէն Ատրպէյճանի կողմէ Ղարաբաղի անկախ հանրապետութիւն ըլլալու փաստին ընդունումով արցախեան հիմնահարցը չի լուծուիր:

Պաքոս մէկ գիշերուան մէջ կրնայ այրել սեղանի վրայ դրուած բոլոր փաստաթուղթերը եւ անցնիլ իր թշնամական ծրագրի գործադրութեան:

Այս բոլորը կան: Այս բոլորին մասին տեղեակ է Սերժ Սարգսեան, որ այսօր աւելի քան, որեւէ ժամանակ կը բոլորէ իր իշխանութեան ամէնէն ծանր եւ պատասխանատու փուլը:

Զիջի՞լ Մոսկուայի առջեւ, փոխարէնը ներքին անիշխանական բարդ եւ վտանգաւոր դրութեան մը տեղ տալով, կամ մերժել բոլոր առաջարկները ու Հայաստանով ու սփիւռքով մէկ գինուորագրուել «մահու կենաց» պատերազմին:

Ամէն պարագայի այս բոլորէն գատ կայ երրորդ ընտրանք մըն ալ, որ ժամանակ շահելու ընտրանքն է, բան մը որ սիրելի մօտեցում է Հայաստանի առաջին դէմքին համար:

Ամէն պարագայի յառաջիկայ փուլը կարեւոր փուլ է Հայաստանի համար: Հոն է, որ վճռորոշ կերպով յստակ պիտի դառնան արցախեան հիմնախնդրին լուծման հաւանականութիւնները կամ տազնապին սրումն ու դէպի անցանկալի պատերազմի մը երթալու ծանր ընտրանքը:

Այս բոլորով մէկտեղ, արդեօք պիտի կարողանա՞յ այսօրուան կոտորած թեւեր ունեցող եւ բաւական անորոշ մօտեցումներու մէջ եղող ընդդիմութիւնը (որ, նաեւ միասնական կեցուածք մը ունենալու կամք ալ չունի) թելադրական խօսք մը ըսել Հայաստանի իշխանութիւններուն:

Հարցումը կարեւոր է, որովհետեւ միայն կամք ունեցող ընդդիմադիր ճակատ մը կրնայ ստիպել ցանկացած իշխանութեան կարեւոր, անյետաձգելի եւ անհրաժեշտ ուժփորձներու երթալ:

Բացի մի քանի միաւորումներէ, ընդդիմութեան մեծ մասսան տարուած է արցախեան թեման շահարկելով, մոռնալով նաեւ, որ այդ ճակատին վրայ Սերժ Սարգսեանի կողմէ ցանկացած պարտուողական քայլ կրնայ ոտքի հանել, ոչ միայն Հայաստանը, այլ ամբողջ հայութիւնը, իր սփիւռքով մէկտեղ: Ու մինչ այդ փոխանակ ամուր պահանջներով բացայայտ բարեփոխումներ պահանջելը, նոյն ընդդիմութիւնը կը շրջանակի մը մէջ ինչալով կը կրկնէ ու կը կրկնէ հող յանձնելու չյանձնելու մասին յանգրգը, որն արդէն վերածուած է բաւական անգործնական խօսքերու ընդհանուր յանգրգի մը:

Այս ընդհանուր պատկերին դիմաց է նաեւ, որ ընդդիմութիւնը պէտք է գիտակցի, որ 25 տարեկան դարձող Հայաստանի հանրապետութեան համար հարկաւոր իրական, անկեղծ եւ ճշմարիտ ուժփորձներն են, եւ ոչ թէ խուճապի երգերն ու անոնց յանգրգները:

ԱՍՈՒԼԱՐԻ ՈՍԿԻ ԶԱՆՔԻ ՇԱՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Շարունակուած էջ 6-էն

խանցեց, որ ռիսքերու գնահատում կատարած են՝ եզրակացնելով, որ Սեւանին որեւէ վտանգ չի սպառնար՝ «էդ փաստաթղթերը, մասնաւորապէս ՇՄԱԳ-ը՝ շրջակայ միջավայրի ազդեցութեան գնահատման հաշուետուութիւնը, մի քանի անգամ յանձնուել է Սեւանի տեխնիկական պաշտպանութեան յանձնաժողով, վերջին երկու անգամն էլ դրական եզրակացութիւն է ստացուել՝ համապատասխան փոփոխութիւններ նախագծում կատարելուց յետոյ»:

«Լիտիան Արմենիա»-ի ներկայացուցիչը նաեւ վստահեցուց, որ հանքավայրի շահագործման ծրագրերը կ'իրականացուի օրէնքին համապատասխան:

Անցած Ուրբաթ վարչապետ Յովիկ Աբրահամեան անձամբ ներկայ գտնուած էր հանքավայրի շինարարութեան մեկնարկի արարողութեան: Կառավարութիւնը իր հաղորդագրութեան մէջ նշած էր, որ այս՝ Հայաստանի մէջ, առաջին հանքարդիւնաբերական ծրագիրն է, որ իրականացուցած է Միջագային ֆինանսական Միութեան եւ վերակառուցման եւ զարգացման եւրոպական դրամատան չափանիշ-

ներուն համապատասխան բնապահպանական եւ ընկերային ազդեցութիւններու գնահատում:

«Լիտիան ինթըրնեշնըլ»-ը, որ գրանցուած է Լա Մանչի կղզիներէն մէկուն, իսկ կենտրոնակայանը տեղակայուած է ԱՄՆ-ի մէջ՝ Քոլորադո նահանգին մէջ, ներդրումներուն մեծ մասը ներգրաւած է անցած տարուան վերջին ուղիղ ամերիկեան ընկերութիւններէն:

Ընկերութեան գործադիր տնօրէն Հովանտ Սթիվընսընը անցած շաբաթ՝ «Ազատութեան», յայտնած էր, որ արդիւնահանումը կը սկսի յաջորդ տարեվերջին, եւ ընկերութիւնը ոսկի կը ստանայ 2018-ի առաջին եռամսեակին:

Բնապահպանները, սակայն, կը կարծեն, որ ծրագրերը հնարաւոր կը դառնայ չեղեալ յայտարարել հանրային բողոքի ալիք բարձրացնելու միջոցով:

«Պէտք է ստեղծուի, ձեւաւորուի քաղաքացիական բողոք, եւ այս քաղաքացիական բողոքի արդիւնքը պէտք է լինի այս ծրագրի չիրագործումը», - «Ազատութեան» հետ ունեցած զրոյցի ընթացքին յայտնեց «Էկոլոլը» հասարակական կազմակերպութեան նախագահ Ինգա Զարաֆեան:

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆԸ

Շարունակուած էջ 16-էն

փայտ մը նետելով կաթսաներուն տակ վառուող օճախի խարոյկին մէջ: Ամբողջ գիշեր հարիսային հսկիչին անունը այս տարի եւս մնաց Պետրոսը (Քէշ յաօղլուն):

Երիտասարդները իրենց երգերով ու պարերով մինչեւ առտու ընկերակցեցան անոր:


Տօնի առաւօտուն Առաւօտեան արդէն հարիսան պատրաստ է, Պետրոսը մէկ կողմ քաշուած էր, եւ հրապարակը ամբողջութեամբ երիտասարդներուն մնացած էր, հարիսան ծեծելը եւ իր վերջնական տեսքին բերելը անոնց գործն էր այլեւս: Այս ընթացքին պատարագի զանգերը կը ղողանջէին, Տէր Աւետիս Թապաշեան, Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ «Ասողիկ» երգչախումբի շարականներու ընկերակցութեամբ, հաւատաց-

եալներուն հետ մատաղը կը նուիրաբերէր Աստուածածնայ եւ Ս. Լեւոն: Արարողութեան աւարտին խաղողը օրհնուեցաւ եւ իւրաքանչիւրը «ամէն տարի այս օրերուն» մաղթանքով հարիսային բաժինը առնելէն ետք ուրախ եւ հանգիստ հոգիով բաժնուեցան Վաքըֆլէն:

Աշխարհի տարբեր կողմերէն եկած հայերը նոյն կաթսային եւ սեղանին շուրջ հաւաքող Վաքըֆլէն անգամ մը եւս յաջողեցաւ հայրենակիցներուն միջեւ կապերը ամրացնելու եւ զօրակցութեան միջոցով մը ստեղծելու մէջ: Այսպիսով Վաքըֆլէն, իր գոյութեան եւ ապրելու նպատակին անգամ մը եւս հասաւ եւ իր կամքով ապացուցեց, որ Մուսա լեւոն շուք հովանին անոնց նախնիներուն հողերուն կառչած մնալու ուժի եւ ներշնչումի աղբիւր է ու կը մնայ:

«ԱՐԱՐԱՏ»

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՅ
 ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՁ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
 ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
 ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՆՆԵՐ՝
 ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680



MEHER BABIAN, D.D.S.
 General Dentistry

1111 S. Glendale Avenue
 Suite 206
 Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884
 Tel: (818) 547-1476



Ring In The New Year With
AGBU
SAVE THE DATE
 12/31/2016
 CELEBRATE WITH US
 AGBU Western District
 Details TBA

ՊԱՆԴՈՒԽՏԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Շարունակուած էջ 14-էն

Հայաստան»ի նշանաւոր պատկերով, որ յղացուած էր իտալացի արուեստագէտ Միքելէ Ֆանոլիի կողմէ (1807-1876)՝ ըստ Միխիթարեաններու պատուէրին: Ըստ այդ պատկերին, «Հայաստան» կը կանչէ զինք լքած գաւակները՝ հայրենիք վերադառնալու եւ գաջն ծաղկեցնելու, հնամեայ երեւակայածին փառքը վերականգնելու համար:

Մինչեւ 1890ական թուականներու կէսերուն, պանդուխտներու նիւթը ամենէն աւելի արծարծուած հարցն էր պոլսահայ մամուլին մէջ: Ֆրանսական իրապաշտութիւնը մեծապէս կ'ազդէր պանդուխտներու՝ հայկական լրատուամիջոցներու կողմէ աշխարհականացած ընկալումին վրայ, որ յատկապէս ակնեբեւ էր յառաջադէմ թերթերու մէջ, ինչպէս «Արեւելք», «Մասիս», «Երկրագունդ» եւ «Հայրենիք»: Ընդգծուած էր պանդուխտներու հարցերուն լուծումներ գտնելու միտումը, որ կ'երթար պարզ օժանդակութեան մինչեւ Արեւմտեան Հայաստանի տնտեսութեան զարգացումը, մինչ կրթութիւնը կ'ընդունուէր իբրեւ համընդհանուր դարման մը: Պոլսոյ իրապաշտները գլխաւորաբար կեդրոնացած էին պանդուխտի քաղաքային փորձառութեան վրայ: Արփիար Արփիարեանը (1851-1908)՝ ազդեցիկ գրագէտ, հանրային գործիչ եւ «Արեւելք»ի ու «Մասիս»ի, ապա «Հայրենիք»ի խմբագիր, արեւմտահայ իրապաշտութեան կնքահայրն էր: Ան կեդրոնական դեր մը կը խաղար «կեանքը ինչպէս որ է» ներկայացնելու ծրագրին մէջ, որ նոյնպէս կարելի էր կիրարկել պանդուխտներու կեանքին նկատմամբ: Պանդուխտներու իրականութեան հետ ամենախոր առնչութիւն ունեցած գրագէտը Հրանդն էր (Մելքոն Կիւրճեան, 1859-1915): Հրանդը անողոք քննադատ մըն էր պանդուխտներու հանդէպ պոլսահայ քաղքենիներու արհամարհանքին, որ նիւթ դարձաւ յօդուածներու եւ փորձագրութիւններու, որոնք ծանօթ դարձան «Պանդուխտի նամակներ» անունին տակ: Սակայն, պանդուխտի հանդէպ համակրանքը հեռու էր պոլսահայ մամուլի ընդհանուր երեւոյթը ըլլալէ:

Դաւիթեանի դասախօսութեան վերջին մասը նուիրուած էր Պոլսոյ ուշ ժ. դարու Պոլսոյ իրապաշտ նկարիչներու կողմէ՝ պանդուխտներու ներկայացումի տակաւին չհետազոտուած հարցին: Ան յատկապէս կեդրոնացաւ Միմոն Յակոբեանի, Պետրոս Սրապեանի (1833-1898) եւ Կարապետ Նշանեանի (1861-1950) գործերուն վրայ: Դաւիթեան պանդուխտ մուրացկաններ ներկայացնող երկու նկարներ ցոյց տուաւ. Սրապեանի «Վանի հայ մուրացկանը» (1882), որ ցուցադրուած ու լաւ ընդունելութեան արժանացած է Պոլսոյ ABC ակումբին մէջ, կը պատկերէ տարիքոտ մուրացկան մը, որ ուղղակի դիտողին կը նայի՝ անոր կարեկցութիւնը հայցելով, եւ Յակոբեանին ուրիշ նկար մը՝ «Մուրացկան կին մը Վանէն» (1889): Երկու գործերուն համեմատական մանրակրկիտ

ընթերցումի մը ընդմէջէն, բանախօսը առաջադրեց կարգ մը նկատողութիւններ օսմանեան արեւելքէն եկող պանդուխտներու ընկալումին մասին՝ քաղաքային ընտրանիներու կողմէ, բայց նաեւ ժամանակաշրջանի ընկերային, տնտեսական ու քաղաքական միջավայրի մասին:

Կարապետ Նշանեանի կրթողային (այժմ կորսուած) «Գաւառական հայկական հարսանիք Մուշի մէջ» (1890) նկարը մուծելով քննարկումին մէջ, Դաւիթեան սուր հակադրութիւններ մատնանշեց Արեւմտեան Հայաստանէն պանդուխտներու սովորական պատկերացումներուն հետ իբրեւ հարստահարուած համայնք եւ անօգնական մուրացկաններ: Այսուհանդերձ, ան զգուշացուց, որ երեւոյթները խաբուսիկ էին եւ կոչ կը հանդիսանային՝ ուշադիր կարդալու այս գործերը, որոնք գաւառաբնակ հայուն ներկայացում մըն էին՝ արեւմտականացած քաղաքաբնակ մտաւորականի պրիմակին ընդմէջէն դիտուած: Նշանեանի մէկ այլ գործ՝ «Նամակի ընթերցումը», որ կը պատկերէր գաւառական հայկական տեսարան մը (հաւանաբար՝ Մուշի մէջ տեղադրուած) եւ ցոյց կու տար պանդուխտի մը նամակին ընթերցումը անոր անգրագէտ տարեց ծնողներուն, կ'ապացուցէր Նշանեանի եւ այլ արուեստագէտներու շարունակական հետաքրքրութիւնը պանդուխտի կերպարին եւ փորձառութեան հանդէպ: Դաւիթեան հրաւիրեց լսարանը, որ վերոյիշեալ երեւութապէս իրապաշտ գործերուն մէջ հաշուի առնէր այլաբանութեան գործածութիւնն ու ներկայութիւնը, ինչպէս եւ զօրաւոր վիպապաշտ ստորգետնեայ հոսանքներ, որոնք յաճախ օգտագործուած են կայսերական գրաքննիչներու աչքին իմաստներ քողարկելու նպատակով:

Դաւիթեան եզրափակեց դասախօսութիւնը Յակոբեանի այլ նկարով մը՝ «Մշոյ համալի մը դիմանկար», որ տարեց պանդուխտի մը խորապէս հոգեբանական դիմանկարն էր: Ան լսարանէն խնդրեց թափանցել նկարի խորքին մէջ, միաժամանակ ունկնդրելով երկու ժամանակակից բնագրերու հատուածներ: Առաջինը Արփիարեանի մէկ յօդուածէն մէջբերում մըն էր, ուր գրագէտը կը քննարկէր բարեկամի մը հակադրեցութիւնը՝ Սրապեանի «Մանուկ աղբար» վերնագրուած նկարին հանդէպ, նկարիչի արուեստանոցին մէկ այցելութեան ժամանակ: Երկրորդ հատուածը կու գար Հրանդի «Պանդուխտի նամակներ» ու առաջին նամակով: Խորհրդանշական այս գրութեան մէջ, հեղինակը քննարկական զգայնութեամբ հայրենիքէն խնձոր մը կը նկարագրէր, զոր կը համեմատէր Արեւմտեան Հայաստանէն պանդուխտի մը:

Ձեռնարկին վերջաւորութեան տեղի ունեցաւ հիւրասիրութիւն մը, թոյլ տալով, որ կազմակերպիչներն ու հիւրերը, ինչպէս եւ Հայկական Ուսմանց Մրագիրի անդամները կապ հաստատէին իրարու հետ եւ վայելէին այս առիթը: Թարգմանութիւն՝ Վարդան Մաթոսեանի

ՀԱԲԱՏԱՐԻՍ ԶԱԲԱԿԸ, ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆԸ

Շարունակուած էջ 15-էն

Նամակով կը փոխանցէր իր ջերմ միջոցարարական խօսքերը՝ «Հեռուէն աղօթակից եղայ ձեր բոլորին հետ ի հանգիստ եկեղեցականի մը, որ իր ամբողջ կեանքի տեւողութեան բացառիկ աշխուժութեամբ տքնեցաւ Աստուծոյ անդաստանին մէջ՝ իր լաւագոյնը եւ ունեցածէն շատ աւելին տալու մարմաջով եւ պատրաստակամութեամբ, միշտ չիզեցնելով շրջապատին՝ Քրիստոսի իտէյալ ծառային պատկերը: ... Անցեալին մի քանի առիթներով պատիւը ունեցած եմ երջանկալիշատակ եղբօրդ հետ զանազան եկեղեցիներու մէջ միասնաբար խորհուրդներ կատարելու եւ մօտէն զգալու իր սիրահամբոյր նկարագիրը եւ մարդոց մօտենալու անուշ նկարագիրը, ինչու չէ նաեւ իր Հայ եկեղեցոյ ծէսին հանդէպ ունեցած բացառիկ բծախնդրութիւնը: Այս բոլորին վրայ անշուշտ պէտք է աւելցնել իր մասնայատուկ ժպիտը, որ կու գար ամբողջացնելու սիրալիր ու տաքուկ ընկերային պահ մը»:

Իսկ Տօքթ. Արտաշէս Նշանեան կը վկայէր թէ՛ «Վերջին շրջանի եզակի հոգեւորական ներկայացուցիչն էր ան՝ վախճանեալ Տէր Վրթանէսը, որ երկար տարիներու ծաւալուն ու բազմաբեղուն համայնքային գործունէութեամբ վստահութիւնն ու յարգանքը կը վայելէր ողջ Հայ եկեղեցականութեան ու աշխարհական դասուն»:

Ընտանիքիս բոլոր անդամներուն անունով մեր երախտագիտութիւնը կը յայտնենք Առաջնորդ Սրբազան հօր, Նիւ ձըրզի Սրբոց Ղեւոնդեաց Եկեղեցոյ Հովիւ Տ. Տիրան Քհնյ. Պահապանին եւ Միակն խորհուրդին, ուր Ուրբաթ եւ Շաբաթ օրուայ Տան Կարգի եւ Վերջին Օծումի արարողութիւնները տեղի ունեցան նախագահութեամբ՝ Առաջնորդ Սրբազան հօր: Շնորհակալութիւն՝ բոլոր ներկայ հո-

գեւորական դասուն, միութենական եւ ազգային ներկայացուցիչներուն, մեր ընտանիքին վշտակից հեռու ու մօտիկ բոլոր սգակիրներուն:

Եթէ մի քանի բառով փորձէի բնորոշել եղբօրս ներդրումը ընտանեկան եւ ազգային կեանքէն ներս այդ պիտի ըլլար կրկնել սգակիրներէն քաղուած հետեւեալ խօսքերը՝

- Սիրուած ուսուցիչ, ցաւակից, անձնուէր, արդարամիտ, ազգասէր, բարեսէր, ազգանպաստ, առատաձեռն, անվախ ու քաջակորով՝ որ իր կաշին փրկելու կամ փառքի համար չէր զիջէր իր անկեղծութիւնը, ըսուելիքը կ'ըսէր առ որ անկ է:

Ահա այդպիսին էր մեր հարգատեղեց եղբայր Ջաւէնը, ժողովուրդէն ճանչցուած եւ յարգուած Տէր Վրթանէս Աւագ Քհնյ. Գալայճեանը, որուն բարեհամբոյր հոգին իր լուսաւոր ժպիտով տակաւ պիտի թեւածէ մեր առօրեային ներս: Մշտնջենական լոյս իր անձնուէր հոգիին:

Կրկին շնորհակալութիւն՝ եւ բիւր երախտագիտութիւն բոլոր անոնց՝ որ վշտակից դարձան մեր կորուստին - Տիրամայր Ջապէլին, Երէցիկին Անահիտին եւ Տէր Վրթանէսին երեք որդիներուն՝ Դոկտ. Ջաւէնին, Պերճին, կրտսեր որդուտն՝ նործ Տէր Աւետիսին, քոյրը՝ Դոկտ. Անի եւ եղբայրները՝ Գէորգ եւ Վազգէն Գալայճեաններուն:

Ընտանիքիս անունով՝ երեք քոյրը ընտանիքիս, Ջարմիւն Գալայճեան-Պողոսեան, Նիւ Եորք, Օգոստոս 28, 2016

39- Տեր Վրթանէս Ա. Քհնյ. Գալայճեանի վախճանման քառասունօրեայ առթիւ հոգեհանգստեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Մայրաքաղաք Ուաշինգթոնի Ս. Աստուածածին Եկեղեցոյ մէջ- Կիրակի՝ Սեպտեմբեր 18, 2016-ին:

ԱՐՑԱԽԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՎԱԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄ

Շարունակուած էջ 16-էն

ազատութեան միջազգային կենտրոնը» Ռիմինիի 37-րդ հանդիպման շրջանակներում:

Յուցադրութիւնից առաջ ողջ ջոյնի խօսքով հանդէս եկան իտալիացու Ջէ Ղեսպան Վիկտորիա Բաղդասարեանը, ֆիլմի հեղինակ Ջիան Միկալեսինը եւ «Խաղաղութեան եւ ազատութեան միջազգային կենտրոնի» տնօրէն Ռոբերտօ Ֆոնտոլանը:

Դեսպան Բաղդասարեանն իր ելոյթում շնորհակալութիւն յայտնեց ֆիլմի հեղինակին՝ Արցախի, ինչպէս նաեւ հակամարտութեան դատում Ատրբեջանի կողմից սան-

ձագերծուած ապրիլեան ազրեսիայի մասին ճշմարտութիւնը ներկայացնելու, ինչպէս նաեւ միջոցառման կազմակերպիչներին՝ ղեսպանութեան հետ սերտ համագործակցելու եւ ֆիլմի շնորհանդէսը կազմակերպելու համար: Հէ Ղեսպանը հակիրճ ներկայացրեց դարաբաղեան հիմնահարցի պատմութիւնն ու էութիւնը: Դեսպանն Բաղդասարեանն ընդգծեց, որ Ջիան Միկալեսինի ֆիլմը ոչ միայն ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի պայքարի պատմութիւնը, այլեւ կոչ է անում անտարբեր չլինել մարդկանց ու ժողովուրդների հանդէպ իրականացող խտրականութեան ու բռնութեան հանդէպ:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԱԿՆԵՐ


1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով

հեռաձայնել՝ (626) 398-0506

SYRIAN ARMENIAN RELIEF FUND Save Support Sustain www.syrianarmenianrelieffund.org

ՀԵՆՐԻԽ ՄԽԻԹԱՐԵԱՆ. «ԹԻՄԱՅԻՆ ՈԳԻ ԵՒ ՀԶՕՐ ՅԱՂԹԱՆԱԿ»



«Մանչեսթեր Եունայթեդի» նորեկ Հենրիխ Մխիթարեանն անդրադարձել է «Հալ Սիթիի» նկատմամբ արտագնայ յաղթանակին Անգլիայի առաջնության երրորդ տուրում:

«Երբեք մի յանձնուիր: Թիմային ոգի եւ հզոր յաղթանակ: Շնորհակալութիւն ֆանատներին: Դուք հրաշալի էք», - ֆէյսբուքեան էջում գրել է Մխիթարեանը:

Յիշեցնենք, որ «Հալ Սիթի» դէմ խաղում «Մանչեսթեր Եունայթեդի» միակ եւ յաղթական կոլն աւելացուած ժամանակում խփել էր անգլիացի 18-ամեայ յարձակուող Մարկուս Ռեշֆորդը, իսկ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպանը փոխարինման էր դուրս եկել 60-րդ րոպէին:

ՄՈՌԻՐԻՆՏԻՆ ԶԻ ՇՏԱՊՈՒՄ ՀԵՆՐԻԽ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ ՀԱՐՑՈՒՄ

«Մանչեսթեր Եունայթեդի» գլխավոր մարզիչ Ժոզէ Մուրինյոն անդրադարձել է Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանին քիչ խաղածամանակ տալուն:

«Եթէ Խուան Մատային թողնեմ պահեստայինների նստարանին, դուք կ'ամէք, որ ցանկանում եմ վաճառել նրան: Կարծում եմ՝ միւսները եւս լաւ են խաղում:

Ինչ վերաբերում է Հենրիխ Մխիթարեանին, այս ես պէտք է աշխարհին ցոյց տամ, որ ճիշդ ձեռքերում եմ կատարել: Ես գիտեմ, որ նա սուպերխաղացող է, եւ ես չեմ շտապում նրան խաղացնելու հարցում: Հենրիխը պատրաստ է խաղալու եւ կարող է հանդէս գալ «Հալ Սիթի» դէմ հանդիպմանը», - Մուրինյոյի խօսքը մէջբերում է Sky Sports-ը:

«Մանչեսթեր Եունայթեդի» նորեկ Հենրիխ Մխիթարեանը «Բորնմութի» եւ «Սաութհեմթոնի» դէմ Պրեմիեր լիգայի նախորդ 2 տուրերի խաղերում փոխարինման էր դուրս եկել 75-րդ րոպէին:

MLS. ԴԱԻԹ ԱՐՇԱԿԵԱՆԻ ՆՈՐԱՄՈՒՏԻ ԽԱՂՈՒՄ «ՉԻԿԱԳՕ ՖԱՅՐԸ» ՊԱՐՏՈՒԵՑ՝ 2:6

Ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականի յարձակուող Դաւիթ Արշակեանը նորամուտը նշեց հիւսիսամերիկեան ՄԼՍ-ի առաջնութիւնում:

ԱՄՆ-ի «Չիկագո Ֆայր» կազմում Դաւիթ Արշակեանը մասնակցեց «Տի Սի Եունայթեդի» դէմ հանդիպմանը՝ փոխարինման դուրս գալով 56-րդ րոպէին:

«Չիկագո Ֆայր» պարտուեց 2:6 հաշուով եւ 23 միաւորով եզրափակում է կանոնաւոր առաջնութեան Արեւելեան գօտու մրցաշարային աղիւսակը:

Երեւանի «Միկայի» նախկին ֆուտպոլիստն ԱՄՆ է տեղափոխուել «Տրակայից», որի կազմում խաղում էր 2014-ից եւ Լիտվայի նախորդ առաջնութիւնում դարձել էր 25 կոլի հեղինակ:

ԵՈՒՐԱ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ ՅԱՂԹԱԿԱՆ ԴՈՒՔՆ ՈՒ ՎՐԻՊՈՒՄԸ 11 ՍԵՏՐԱՆՑԻՑ

MLS-ի կանոնաւոր առաջնութեան հերթական տուրում ամերիկեան «Ռեալ Սոլթ Լէյքը» սեփական խաղադաշտում 2:1 հաշուով կամային յաղթանակ է տարել «Կոլորադոյի» նկատմամբ:

Դաշտի տէրերի 2 կոլերն էլ խփել է Եուրա Մովսիսեանը, որը մեկնարկային կազմում խաղացել է 76 րոպէ: 39-րդ րոպէին հայ յարձակուողը հաշիւը դարձրել է 1:1, իսկ ընդմիջումից 4 րոպէ անց գեղեցիկ հարուածով առաջ է մղել «Ռեալ Սոլթ Լէյքին»: 57-րդ րոպէին Մովսիսեանը նաեւ վրիպել է 11 մետրանոցից, որն ինքն էր վաստակել: Եուրա Մովսիսեանն ընթացիկ մրցաշրջանում կոլերի քանակը հասցրեց 9-ի:

Յիշեցնենք, որ վերջին շրջանում Եուրա Մովսիսեանը չի հրաւիրուում Հայաստանի ազգային հաւաքական, որը նախապատրաստում է Չեխիայի դէմ ընկերական խաղին ու Դանիայի հետ աշխարհի 2018թ. առաջնութեան ընտրական փուլի առաջին տուրի հանդիպմանը:

Չեխիա-Հայաստան խաղը կը կայանայ Օգոստոսի 31-ին Մլադա Բուլեսլաւ քաղաքում, իսկ Դանիա -Հայաստան հանդիպումը՝ Սեպտեմբերի 4-ին Կոպենհագենում:

ՀԱՅ ՄԵՏԱԼԱԿԻՐ ՕԼԻՄՊԻԱԿԱՆՆԵՐԻ ԴԻՄԱԴՈՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ



Նորանկախ Հայաստանի երկրորդ օլիմպիական ախոյեան Արթուր Ալեքսանեանին, օլիմպիական փոխախոյեաններ Միհրան Յարութիւնեանին, Գոռ Մինասեանին եւ Սիմոն Մարտիրոսեանին Երեւանում դիմաւորեցին հերոսավայել:

Օլիմպիական ախոյեանի եւ օլիմպիական փոխախոյեանների վերադարձն իսկական տօն էր: Ախոյեանների ժամանումից ժամեր առաջ արդէն «Ջուարթոց» օդանաւակայանի սպասարահը լի էր երկրպագուներով: Օդանաւակայանում էին հաւաքուել հազարաւոր երկրպագուներ Գիւմրիից, Էջմիածնից, Հայկաշէնից, Երեւանից, Հայաստանի տարբեր մարզերից ժամանած մարզիկների հարազատներ, բարեկամներ, տատիկ-պապիկներ:

Աւելի քան 2 ժամ պաստառները պարզած, մետալակիրների անունները վանկարկելով, երգ ու պարով հայ երկրպագուները սպասում էին հերոսների ժամանելուն:

Սրահում ասեղ զցելու տեղ չկար: Հաւաքուածները հրում էին միմեանց, իւրաքանչիւրը ցանկանում էր առաջինը տեսնել օլիմպիական ախոյեանին, միւս մետալակիրներին:

Սպասարահը «պայթեց», երբ դուրս եկան մետալակիրները: Մետալակիրներին դափնէ պսակները յանձնեցին ՀՀ վարչապետ Յովիկ Աբրահամեանը, ՀԱՕԿ նախագահ Գագիկ Ծառուկեանը: Օդանաւակայանի սպասարահում հնչեց Հայաստանի հիմնը: Մետալակիրներին մօտենալն ուղղակի անհնար էր: Նրանց շղթայի մէջ էին առել ոստիկանները: Դրսում մարզիկներին սպասում էր շքեղ հրավառութիւն եւ շքեղ ակտոմեքենաներ՝ նրանց տուն հասցնելու նպատակով: Սակայն Ռիօ-2016-ի հերոսները Երեւանի սիթի-տուրի ակտոբուսով ուղեւորուեցին Հանրապետութեան հրապարակ, նրանց յետեւից երկրպագուները՝ դրօշներով եւ ազդանշաններով:

ՄԱՍԻԿՈՆ ՂԱՐԻՔԵԱՆԸ ԵՒ ՄԱՆՈՒԷԼ ՊԵՏՐՈՍԵԱՆԸ ՀՈՉԱԿՈՒԷԼ ԵՆ ՇԱԽՄԱՏԻ ԵՐՈՊԱՅԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱԽՈՅԵԱՆՆԵՐ



Պրահայում աւարտուած ճատրակի Եւրոպայի պատանեկան առաջնութիւնում մինչեւ 12 տարեկան տղաների ախոյեան է հռչակուել Մամիկոն Ղարիբեանը, ով 9-ը հնարաւորից վաստակել է 8 միաւոր: Մինչեւ 18 տարեկան տղաների առաջնութիւնում ախոյեանի տիտղոսը նուաճել է Մանուէլ Պետրոսեանը, ով 9-ը հնարաւորից վաստակել է 7,5 միաւոր:

Առաջնութիւնում յաջող է հանդէս եկել նաեւ մինչեւ 8 տարեկանների առաջնութիւնում հանդէս եկող Ռուդոլֆ Փաշիկեանը, ով վաստակած 7 միաւորով կիսել է 2-7-րդ հորիզոնականները, սակայն ցածր լրացուցիչ ցուցանիշների պատճառով գրաւել 7-րդ հորիզոնականը:

Մինչեւ 16 տարեկանների մրցաշարում հանդէս եկող Արամ Յակոբեանը վաստակած 7 միաւորով կիսել է 3-5-րդ հորիզոնականները, սակայն լրացուցիչ ցուցանիշների հաշուարկից յետոյ գրաւել 5-րդ հորիզոնականը: